1960

ՀԵՂՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՐԵՆԵԱՅ

ԳԻՐՔ
ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԻՐՆԵՍԻՑ ԱՇԽԱՐՀԻ

ԿԱՀՄԵՑ

Լուսանկար Մ. Փափազեանց.

II-14
22
5/508

ՀՆՈՒԹԻՒՆՔ
ՎԱՆՕՐԷԻՑ

ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՉԻՆՊԵՏՐՈՒԴ ՓԻՐՔ

ԳԻՆՆ 10 ՐՈՒԲԼԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1892

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆ Տ. ՏԵԴԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ամենամեծ ցանկութիւններիցս մինն էլ այն էր, որ իմ դուրս բերած ՀԱՅ-ԼԻՆ-Ի Հայրենեաց լուսանկար Ալբոմները, որքան կարելի էր արժան և դիւրամատչելի կացուցանել հայ հասարակութեան ամեն դասակարգի համար։

Այս ցանկութիւնը կարելի էր կատարել մինչև այժմ դուրս բերած ամեն գրքերի համար՝ եթէ ունենայի մի որ և է Ազգ. հաստատութիւնից և կամ մի ընկերութիւնից ինձ նիւթապէս օժանդակող ոյժ. ցանկալի էր և արժէր որ տեսնէի, բայց դժբաղդաբար մինչի օրս ինձ նման մի մարկանացուի չէ վիճակուած արժանանալ այդ տեսակ օժանդակութեան։

Ցոյս ունեմ՝ երբ և իցէ արժանանալու մի այսպիսի դաժան և մեծածախս գործի համար գէթ բարոյապէս վարձադրուելու, այդ յոյսն է, որ ինձ մղել է սար ու ձոր, ու ամեն վտանգ և զլխոյթիւն յանձն առնելով անտրտունջ առաջ տանել իմ մի անգամ սկսուած գործը թերի չթողնելու համար։

Ինչպէս իմ մասնաւոր յայտարարութիւնից կերևի, որ մինչի այժմ դուրս եկած չորս գրքերից Ա. և Բ. հատորները հազիւ իմ սուղ միջոցներով կարողացել եմ հանդէս բերել, իսկ Գ. և Դ. հատորները՝ մասնաւոր անձանց դրամաւոր օժանդակութեամբ։

Մինչդեռ Ե-երորդ գիրքը դուրս բերելու ծանր մտատանջութեան մէջ էի, այս ճգնաժամիս յանկարծ ինձ օգնութեան է հասնում ԳԵՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ՍԲԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՑ՝ ուղարկելով ինձ հետևեալ նամակով 250 ռուբլի։

Սորանից մի քանի օր յետոյ—ուղիղ Քրիստոսի Յարութեան առաւօտը ստանում եմ Բագուից Մեծանուն բարերար Պ. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻՑ 200 ռուբլի, որով մինչև այժմ համբերութեամբ տարած յոյսերս, արդարև կրկին և կրկին հաստատեցին իմ մէջ։

Ուստի, այդ մեծանուն բարերարների ինձ հասուցած օգնութիւնը, փոխանակ իմ հազար ու մի պակասութիւններս հոգալու, անմիջապէս ի գործ եմ դնում հատորի դուրս բերելուն, զետեղելով իւր մէջ ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ նշխարներից 26 նկարներ, որով մասամբ թէ իմ, և թէ շատերի ցանկութիւնը կատարուած եմ տեսնում, թէ նկարների շատութեամբ և թէ իւր ճոխ ծանօթութեամբ։

Ուրեմն իմ ամենանեղ ժամանակիս՝ գործիս օգնութեան հասնող վերոյիշեալ բարերարներիս ես բաւ չեմ կարող գտնել շնորհակալիքս յայտնելու, այլ խնդրելով ԳԵՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ՍԲԲԱԶԱՆ ԵՊՍ. ԱՂՈՒԱՆԵԱՆԻՑ և ԱԶՆՈՒԱՄԵԾԱՐ Պ. ԱՒԱԳԲԵԼ ԾԱՏՈՒՐԵԱՆԻՑ՝ որընդունեն ինձ նման վաստակաւորի անմոռանալի երախտագիտական նուէրը—սոյն Ե-երորդ հատորը. որ նուիրում եմ բարերարաց անուան հանդերձ ամենախոնարհ յարգանօքս։

Լուսանկար
ՄԱՏԹԷՈՍ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

10 Ապրելի 1892 ամի
Վաղարշապատ

ԱՆ ՍԻՄԷՈՆ
ՀՈԳԵՒՈՐ
ԳՐԱՏՈՒՆ

27 Մարտ 1892 թվի էջմիածին

ՀԵՐԴ ՄԵԾԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՆՈՒԹԵԱՆՑ ԼՈՒՍԱՆԿԱՐ
Պ. Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ.

Բազում անգամ ցանկացեր եմ իմ հին հաւուց հայրենիքը՝ Աղուանից աշխարհը տեսանել, ուսկից իմ նախնիք՝ թերեւս դասալքութեամբ թողեր լքեր են իրենց ժառանգութիւնը գաղթելով ի Վասպուրական, չէ յաջողուեր իմ բաղձանաց կատարումն:

Իսկ այժմ խորհեցայ, քանի որ սիրտս իւր բոլոր կըրածներով, ապի մի սեւ հողի չէ փոխուեր, ՍԻՒՆԵԱՑ ԱՇԽԱՐՀԻ չէն եւ աւեր տաճարաց պատկերներո՛վ զէր միխթարուիլ, զորս դուք քրտնաջան աշխատութեամբ ձեռք բերեա՛ք:

Հոցա պատկերաց գոյութիւնը ի լոյս աշխարհ հանելու համար՝ կնուիրեմ հայրենավաստակ առաքինւոյդ 220 ռուբլի իբրեւ խուն ինչ թերեւութիւն ծախքերուդ. մաղթելով ձեզ նոր կարողութիւն:

Գ. Ե. ԸՂՈՒԸՆԵՌՆ



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



316 ԱՐԵՐԱՆԻ ՊՂՈՒՏԻ ԳԻՆԴՈՒՄ



315 ԼԻՍԻ ԾԱՂԻ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Որանից առաջ մեր դուրս բերած Չորրորդ գիրքը—Ալբոմը—կազմում էր Գողթան գաւառում գտնուած վանօրայքը և հնութիւնները, որոյ մէջ էր գտնվում Ալպրակունիս գիւղում Երնջակու հռչակաւոր բազմաղարեան Ս. Կարապետի վանքը, սորա, և սորա ունեցած ժրաջան միաբանութեան մասին, ինչպէս յայտնի է համառօտ խօսել էինք. այս անգամ Սիւնեաց աշխարհը մտնելու համար մենք ճանապարհ կընտրենք այս կողմով, որով թէ նոյն վանահօր և միաբանութեան քաղցր տեսութիւնը կվայելենք և թէ թէև վտանգաւոր, բայց մեր աւելի նպատակահարմար ճանապարհը Ղազանջի գիւղն սարոփն անցկենալն է յարմար լինում:

Այս երկրորդ անգամ Երնջակու վանքը հանդիպելիս, մեր սիրտն աւելի ևս ուրախ մնաց, տեսնելով նոյն վանահօր՝ Երց. Միքայէլ աբեղայի աշխատութիւնները, որ խնամք էր տանում վանքի շինութեան և պայծառութեան համար, այս անգամ մեր ուշքը գրաւեց, վանքի հիւսիսային կողմի շինութեան կարկատանները, որը Գեր. Ա. եպս. Սեղրակեանի վանահայրութեան ժամանակ աղիւսաշէն, երկար, ընդարձակ, բայց կիսատ մնացած մի շինութիւն էր. բայց այժմ քարից նորոգելով սորա ներքին սիւները այլև կարկատելով զանազան մասերը կամենում է դպրոցական դասարանի վերածել, որ վաղ ժամանակ էլ իսկ և իսկ այս նպատակի համար կառուցած է եղել, և մեզ անյայտ պատճառներից մնացել է այնպէս թերի. ցանկալի կլինէր գէթ այժմ իրագործուէր այդ բարի գաղափարը և յաջողութիւն ունենար, որով շրջակայ գիւղացիք և սոցա մատաղ սերունդը տգիտութեան խաւարից դուրս՝ լոյս աշխարհ գալով հասարակութեան պիտանի դաւակներ կդառնային:

Մեր Չորրորդ գրքի մէջ սոյն Ալպրակունիս գիւղի վերա եղած բարձր ժայռի մասին էլ խօսել էինք, որ Կլաի դաղ (օձալեառն) են անուանում, առանց սորա նկարը նոյն հատորի մէջ զետեղելու. այս մասին շատերից նկատողութեան նամակներ ստանալով, այժմ զետեղում ենք այս տեղ տես № 315 նկարը:

Սա իւր բարձրութեամբը մի օրուայ ճանապարհ հեռաւորութիւնից երեք կողմերից՝ այն է 'Նախի-

ջևանի, Ազրաքսի ափերից և Ազուլիսի կողմերից տեսնվում է. հեռաւոր տեղերից տեսնելիս սորա գագաթը՝ իւր բաց բերանով, նմանւում է օձի գլխի, որոյ համար թերևս անուանում են Իլան դաղի—օձաբերան, ինքն կատարեալ քարաժայռ է միապաղաղ, և սեպաձև՝ այնպէս որ, անկարելի է վերև բարձրանալ. քանի մօտենում էք սորա արևելեան կողքին աւելի պարզ և որոշ է տեսնվում իւր վրայ ունեցած խոռոչները, որոնց մի մի այրեր կարելի է համարել:

Տեղացիք սոյն լեռան երեք անուն են տալիս, Իլան դաղի՝ որ կնշանակէ օձի լեռ թերևս վաղ ժամանակ սորա վրայ շատ և բազմատեսակ օձեր եղած լինին, ինչպէս հնախոյզները կարծում են. երկրորդ Իրան դաղի՝ որը նշանակում է պարսկալեռ. իսկ երրորդը՝ Ինան դաղի կամ Ինանէ դաղը՝ սորան պատմում են աւանդութեամբ թէ՝ երբ Նոյ նահապետ իւր տապանով այս տեղից անցկենալիս՝ նաւը հպել է սորա գագաթին և իւր զգալի հարուածից ասաց լինի թէ հաւատայ՝ որ լեռ է՝ թուրքերէն կնշանակէ Ինանէ դաղը՝ որ հէտզհետէ լեզուի աղաւանօք և կրճատմամբ բառին դառել է—ինանդաղի. մենք սոցա մասին ոչ մի կարծիք չունենք և թողնում ենք մեծ հնասէրներին:

Լերան արևմտեան կողմի ստորոտումն է լինում Ռանա անուանեալ թուրքի գիւղը, որ վաղ ժամանակ Ունիթոռները ունեցել են այս տեղ իրենց եկեղեցին, որ մեծ միաբանութիւն ունէր Զորեքտասաներրորդ դարու սկիզբներում և մեծ երկպառակութիւն և վնաս հասուցին ազգին, պարագլուխ ունենալով ազգաւէր Յովհան քռնեցին, որ էր աշակերտ Նսայի վարդապետի Նչեցւոյ. որը թողնելով իւր վարժապետն ու իւր եկեղեցին՝ գնում է Մարաղայ, լատինադաւան Բարդուղիմէոս եպիսկոպոսի հետ միանում, ինչպէս կգրէ Ղազար Ջահկեցին իւր գրքի երես 326 այսպէս, «Եւ մոլորական հոգին այն . . թողեալ զվարժապետն իւր և զուսումնակից եղբարս ուղղափառս, գնացեալ ի Մարաղայ և գտանէ անդ մոլորեցուցիչ ոմն Բարդուղիմէոս անուն . . ևայլն. գալիս են Ռանայի վանքը, ժողովելով իրենց շուրջ՝ իրենց համամիտ շատ աշակերտներ, սկսում են քարոզութեամբ աշխատել՝ ոչ միայն ի վնաս եկեղեցւոյ, այլ և աշխատում են ընաջնջել անել հայ լեզուն, լատիներէն արարողութիւնք

կատարելով, որոց աղդակործան պատմութիւնը շատ ընդարձակ կ'լինի գրել այս տեղ. բայց այս մասին ընթերցողին փոքր ի շատէ գաղափար տալու համար Զամչեանից կօրինակենք հետևեալ գրուածքը, որ համառօտապէս առնուած է Մխիթար կաթուղիկոսի հաստատանաց ժողովից գրքից այսպէս . . յանդգնեցան « ի ծածուկ և յայտնի մոլորութիւն մուծանել յեկեղեցի, քանզի ինքեանք « կրկին ձեռնադրեալք և կրկին մկրտեալք՝ նաև զայլս բազումս ձգեցին « առ ինքեանս և կրկին մկրտեցին և կրկին ձեռնադրեցին. զի զոմանս ի « բազանիս, զայլս ի տունս և զ'այլս յանձս ջրոց կրկին մկրտէին, և ի ծա- « ծուկ տեղիս և ի վայրս անտառաց կրկին ձեռնադրեցին. Եւ պատճառ « զայս այսպէս առնելոյ ասէին նախ՝ թէ յորժամ զառաջինն մկտեցայք՝ ոչ « ճանաչէիք. ուստի և չէք գիտակ՝ թէ արդեօք քահանայն ասացեալ իցէ « Եւ Մկրտեմ զ Եզ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. և զուցէ չիցէ ա- « ասացեալ վասն արրեցութեան, վասն որոյ հարկ է ձեզ մկտել ի կատա- « րեալ հասակի, զի ստուգապէս ընկալջիք ի քահանայէ զձև մկրտութեան, « և հանջիք զերկրայութիւն ի սրտից ձերոց. Երկրորդ զի զմեզն զորս « գործեցիք, զուցէ ապաշխարութեամբ չ'արացիք ջնջել. այժմ մկրտու- « թեամբ քաւեալ սրբեսջիք, և առանց պատժի քաւարանի կարասջիք ան- « ցանել յարքայութիւն երկնից : . .

Սոքա անպատմելի և տակալի չարութիւններ հաստատելոց յետոյ՝ և թերևս իրաւործուէր էրենց չար նպատակը, եթէ չլինէին նոյն դարում գտնուած մի քանի վարդապետներ ինչպէս են Սարգիս վարդապետն վանահայր Երնջակու. Խրիմեցի Մաղաքիա վարդապետն որ կոչի ճգնաւոր, սա հրաւիրում է Տաթևից Յոհան Որոտնեցուցն և յետոյ Դիրոում է Տաթևացուն Լայն, որոնք ամէն ճիգ և աշխատութիւն ի գործ են դնում թէ քարոզութեամբ և թէ գրութեամբ, որոց շնորհիւ՝ այսօր նոցա դոյութեանց փոխանակ մենք տեսնում ենք, նոցա հաստատութեանց բնաջինջ եղած աւեր վայրակներ, ուր շատ տեղեր՝ ինչպէս են Տփխիս, Նախիջևան, Մարաղայ, Սուլթանիէ, Ռէփէ՝ Խրիմ քաղաքում (որը այս՝ նոյն ժամանակ Ղինուացոց իշխանութեան տակ էր), նոյնպէս և այս տեղ Ռընայում, ըստ որ հիմնահատակ եղած:

Ռընայ գիւղից դարձեալ դէպի արևմուտք Ալբակունիք կամ Ալբակունիս գիւղն է արդէն, իւր Ս. Կարապետի վանքով:

Սորանից դէպի հարաւ արևելք մի քանի թուրքի գիւղերից անցնելով. մտնում ենք Ղազանչի հայաբնակ գիւղը որի հին անունը Շահկերտ է կոչվում, որը ունի շատ սիրուն դիրք և հիանալի տեսարան. շրջակայքը զարդարուած է պտղատու

ծառերով, այգիներով և լեռներով։ Արևմտեան կողմից Երնջակաբերդը, որ աւանդութեամբ Ամբատաբերդ են անուանում, որի մասին մեր Զորբորդ գրքում յիշել ենք։ Հարաւային կողմում պ՚ԱԸ—դայա (մեղրով ժայռ) այս անունով կոչում են տեղացիք, ինչպէս պատմեցին, որ սորա գագաթին մեղուք բուն են դրած եղել, բայց որքան ճշմարիտ է չենք գիտեր, որովհետև իւր սրածայր գագաթում բարձրանալ անհնարին է։ Հիւսիսային կողմը անառիկ ամրոցն է Ղ՚ազանջոյ, որը ի հնումն շատ անգամ ապաստանարան է եղած ուղորմելի ժողովրդին պարսիկ ասպատակողների և բռնաւորների երեսէն, ինչպէս կգրէ պատմիչ Հ։ Ա։ Զամչեանը

«Յետ այսորիկ հաստատեալ Հեյտարայ ի միտս իւր առնուլ վրէժս ի շահ-
«կերտցոց։ անաւ, ժողովեաց զոքս, և պատրաստեցաւ դիմել ի քաղաք
«նոցա ի Շահկերտ, որ կոչի ևս Ղազանջի։

Արևելեան կողմը, հեռուն՝ Սիւնիքի բարձր լեռնաշղթայն է իւր քարաժայռ ու վեթխարի բարձրութեամբ կանգնած։

Այն գիւղը մնում այցելուն ակամայ յիշում է եթէ ոչ քաղաք, գէթ մի մեծ աւան պէտք է եղած լինի առաջ։ արդէն պատմութիւնը մեզ ցոյց կտայ, որ շատ անգամ քաղաք էր կոչվում, այս ուղղորդը անմիջապէս կտեղեկանայ, երբ գիւղիս մի բարձրաւանդակ տեղում կանգնէ և դիտէ իւր շրջակայքը, ուր տեսնվում է աւերակ շինութեանց հետքերը, այգիները, ջրաղացները, քարվանսարայը, նաև Շահկերտի նախնի մեծութեան, փարթամութեան ու ժողովրդոց բարեպաշտութեան մի վկայ էլ Ամենափրկիչ անունով լայնանիստ, ընդարձակ և շքեղաշէն եկեղեցին է, գիւղի մէջ երկու ընդարձակ և մեծ գերեզմանատներ կայ հին և մաշուած տապանաքարերով։ բայց այժմ չկայ այդ։ ժողովուրդից, ոմանք գաղթել են, ինչպէս Հ՚ուշում բնակութիւն հաստատելով, ունին այժմ այնտեղ աւանձին թաղ և առանձին եկեղեցի Ղ՚ազանջ-ոյ անունով։ ոմանք մեռել և ոմանք սրոյ ճարակ են եղել Պարսիկ ասպատակների, Հայտար խանների, Ղանկթամուրների և այլն հրոսակների բռնաւորների չարագործութիւնից։ «Այլ Ղանկթամուր փութանակի անցեալ յաշխարհն Սիւնեաց՝
«պաշարեաց նախ զամրոցն Երնջակայ և էառ զայն մարթիւ ևի սուր եհան
«զամենայն բնակիչս նորա։ և ապա դիմեալ ի վերայ այլոց քաղաքաց՝

«զնոյն արար և ի նոսա յերեսին աշխարհս, ի Սինիս, ի յԱյրարատ, և
«յԱրցախ և զօրք նորա սփռեալ յամենան խորշս աշխարհին . . քանդե-
«ցին և աւերեցին բազում տեղիս . . Զամչեան գիրք Ը. ե-
րես 421, իսկ այժմ հաղիւ 200 տուն ժողովուրդ
ունենայ, նայելով այսքան տուն ժողովուրդին, չու-
նին ուսումնարան, 18—20 փոքրիկ երեխաներ ե-
կեղեցւոյ դրան առաջ փսիաթի վերայ նստոտած
կարդում են, մի երիտասարդի առաջնորդու-
թեամբ։

Վերոյիշեալ Ը. մենափրկիչ եկեղեցին, ինչպէս տե-
սանք, մեծ ու լայնանիստ շինութիւն է՝ համակ սըր-
բատաշ քարերով, շինութեան բուն թուական գըտ-
նել՝ հակառակ մեր ցանկութեան անհնարին եղաւ,
բայց մի թուական «ՌՃԳ. շինեցին» վերտա-
ռութեամբ, որը եկեղեցւոյ արևմտեան դրան ճա-
կատին դրուած մի խաչաքարի վրայ գրած էր. բայց
նայելով տաճարի հնութեանը և քարերի սրդէն
բոլորովին մաշուած լինելուն, նոյն թուականը շի-
նութեան բուն թուական լինելն անհաւատալի է.
եկեղեցւոյ ներսը մութն է և անմաքուր պահուած,
ունի երեք պատարագամատոյց սեղաններ, մինը մի-
ջին՝ աւագ սեղանը, որը հոյակապ և ընդարձակ է,
և երկուքն էլ սորա աջ և ձախ կողմերում։

Տեղւոյս ժողովուրդը, ինչպէս իրենք են պատ-
մում, կէսն ընիկ և կէսն գաղթականներ են, պա-
րապում են մեղուաբուծութեամբ, հողագործու-
թեամբ և այգեպանութեամբ։

Շարունակենք մեր ճանապարհը սորա արևելեան
կողմով և անցնենք մեր առաջ երևցած բարձր լեռ-
նաշղթայն, որտեղից մտնում ենք Սիւնեաց աշ-
խարհը. ճանապարհին աջ և ձախ գտնվում են
հայի և թուրքի գիւղեր, հայերը մեծ մասամբ գաղ-
թականներ են 1830 թուականների, և տեղաւորած
են, Թաղաքէղ, Աղէնդ, Աբուլը, Ո-ղ, Ղարաբէյլէ, Անգեղակոթ,
Պալաբ, Շաղամ, Մաղրաբ, Իւէնճէ, Ղարաբէյլէ. Լայն գիւղերում,
սորանք սարը բարձրանալիս մի հովտի մէջ են գըտ-
նվում մինչև Որոտնայ վանքի մօտերը, մօտ օրու-
կէսուայ ճանապարհ։

Այս տեղերքը հնութեանց արժանի ոչ ինչ չի
տեսնիլ ուղևորը. գիւղացւոց պարապմունքն է հո-
ղագործութիւնը, այն էլ խիստ նահապետական դը-
րութեամբ, և մասամբ անասնապահներ են, սոյն

«զնոյն արար և ի նոսա յերեսին աշխարհս, ի Սիւնիս, ի յԱյրարատ, և
«յԱրցախ և զօրք նորա սփռեալ յամենան խորշս աշխարհին . . քանդե-
«ցին և աւերեցին բազում տեղիս . . Զամչեան գիրք Ը. ե-
րես 421, իսկ այժմ հաղիւ 200 տուն ժողովուրդ
ունենայ, նայելով այսքան տուն ժողովուրդին, չու-
նին ուսումնարան, 18—20 փոքրիկ երեխաներ ե-
կեղեցւոյ դրան առաջ փսիաթի վերայ նստոտած
կարդում են, մի երիտասարդի առաջնորդու-
թեամբ։

Վերոյիշեալ Ը. մենափրկիչ եկեղեցին, ինչպէս տե-
սանք, մեծ ու լայնանիստ շինութիւն է՝ համակ սըր-
բատաշ քարերով, շինութեան բուն թուական գըտ-
նել՝ հակառակ մեր ցանկութեան անհնարին եղաւ,
բայց մի թուական «ՌՃԳ. շինեցին» վերտա-
ռութեամբ, որը եկեղեցւոյ արևմտեան դրան ճա-
կատին դրուած մի խաչաքարի վրայ գրած էր. բայց
նայելով տաճարի հնութեանը և քարերի սրդէն
բոլորովին մաշուած լինելուն, նոյն թուականը շի-
նութեան բուն թուական լինելն անհաւատալի է.
եկեղեցւոյ ներսը մութն է և անմաքուր պահուած,
ունի երեք պատարագամատոյց սեղաններ, մինը մի-
ջին՝ աւագ սեղանը, որը հոյակապ և ընդարձակ է,
և երկուքն էլ սորա աջ և ձախ կողմերում։

Տեղւոյս ժողովուրդը, ինչպէս իրենք են պատ-
մում, կէսն ընիկ և կէսն գաղթականներ են, պա-
րապում են մեղուաբուծութեամբ, հողագործու-
թեամբ և այգեպանութեամբ։

Շարունակենք մեր ճանապարհը սորա արևելեան
կողմով և անցնենք մեր առաջ երևցած բարձր լեռ-
նաշղթայն, որտեղից մտնում ենք Սիւնեաց աշ-
խարհը. ճանապարհին աջ և ձախ գտնվում են
հայի և թուրքի գիւղեր, հայերը մեծ մասամբ գաղ-
թականներ են 1830 թուականների, և տեղաւորած
են, Թաղաքէղ, Աղէնդ, Աբուլը, Ո-ղ, Ղարաբէյլէ, Անգեղակոթ,
Պալաբ, Շաղամ, Մաղրաբ, Իւէնճէ, Ղարաբէյլէ. Լայն գիւղերում,
սորանք սարը բարձրանալիս մի հովտի մէջ են գըտ-
նվում մինչև Որոտնայ վանքի մօտերը, մօտ օրու-
կէսուայ ճանապարհ։

Այս տեղերքը հնութեանց արժանի ոչ ինչ չի
տեսնիլ ուղևորը. գիւղացւոց պարապմունքն է հո-
ղագործութիւնը, այն էլ խիստ նահապետական դը-
րութեամբ, և մասամբ անասնապահներ են, սոյն

վերոյիշեալ գիւղերից անցնելով հասնում ենք մինչ Բաղարջ անուանեալ գեղի ափին տեղաւորած մեծադիր, և բազմամարդ Ո-ղ անուն հայաբնակ գիւղը. Այս տեղ ևս ուշադրութեան արժանի ոչ ինչ չի տեսնվում:

Ուղ գիւղից դուրս գալով, գեղի ձախ ափի վրայով մի նեղ ուղի կայ, որ տանում է մեզ Որոտնայ հռչակաւոր և անուանի վանքը, այս ճանապարհի վրայ կան թուրքաբնակ գիւղեր, որոնցից մին Աղա-ֆէ է կոչվում. այս տեղ կայ մի քանդուած եկեղեցի, որի միայն զանգակատան մի մասն է մընացել, և որը կառուցած է եկեղեցւոյ սեղանի հիւսիսային կողմը՝ կից սեղանին, փոխանակ եկեղեցւոյ արևմտեան կողմը լինելու, ինչպէս առ հասարակ լինում է. սեղանի միայն կամարը կիսով չափ մընացել է, տես № 316 նկարը. յատակը լեքցուած է հողով մինչ սեղանի բեմի հաւասարութեամբ, այնպէս որ, մի փոքրիկ բացութեայ բակ է կազմել, և որի համար էլ այստեղ են խմբվում թուրքերը՝ գիւղային մի որ և է գործի համար մի հարց վճռելիս, կամ մին երդուեցնելիս և աղօթելիս, իբրև սուրբ տեղ. իրենք ևս հաւատով են և վախենում են ներս—սուրբից, գոնէ այդպէս են, հաւատացնում և ձևացնում իրենց օտարականների առաջ, բայց խիստ աւազակաբարոյ և անպարկեշտ են:

Սոյն աւերակի շուրջը գերեզմանատուն է, եղծուած արձանագրութիւններով և մաշուած քարերով, կան սոյն գերեզմանաքարերի վրայ քանդակներ, նման մեր երկրորդ գրքի № 261 նկարի, որոնց վերայ քանդակուած է հողագործը գութանը լծած երկիր վարելիս, և այլն սոցա նման քանդակներ:



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

317 ՕՐՈՏՆՈՑ ՎԱՆՔԻ ԱՒԵՐԱԿ ԴԱԼԽՔՆԵՐԸ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ՈՐՈՏՆԱՅ ՎԱՆՔԸ №№ 317—318

Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ՍԵՄԱՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Աղուաի գիւղից ճանապարհը միշտ դեպի եղերքի և քարքարոտ բլրակների վրայ շարունակելով, մօտաւորապէս մի ժամուայ ճանապարհից յետոյ հասնում ենք Որոտնայ գիւղը, որ թուրքերէն Ո-ը-ա գիւղ են անուանում, որտեղից մի փոքր առաջ գնալով արդէն հասնում ենք վանքին:

Որոտնայ վանքը տեղաւորուած է մի բարձրադիր բլրակի վրայ, որի հարաւային կողմի ձորի միջով արագ գնում է Համանուն գետը, որ մի քիչ առաջ Ուղ գիւղի մօտերքում բաղարչայ անունն էր կրում: Գետը իւր ոլորապտոյտ ընթացքը շարունակելով գնում է Որոտնայ բերդի տակովը՝ մտնում Լոյ-ը և այսպէս շարունակաբար և երբեմն անհետանալով լեռների և նեղանձուկ ձորերի միջով, իւր ընդարձակ շրջանով գնում Տաթևի արևելեան կողմ Սաձակ շրջանով գնում Տաթևի մօտ՝ մեծ անապատի առաջ Տաթև առուակի հետ՝ գնում հասնում Ա-ը-ն-ը՝ որ և այս տեղ բաւականին մեծանում է:

Եթէ մտնէք վանքը, բակից ձեր առաջ ներկայանում է սիրուն և մի հիանալի տեսարան. վանքի ցածրից արագընթաց համանուն գետը, քիչ հեռուն՝ դէպի արևելեան կողմ մի բարձր քարաժայռ լեռ, որին անուանում են Որոտնաբերդ, սորա գագաթում հեռադիտակով նայելիս մի ինչ որ շինութեան հետք է նշմարվում: Հարաւային կողմը ցածրում՝ Ուրուտ կամ Որոտնայ գիւղը, սորա կողքից սկսած դէպի հարաւ բարձր կաւային լեռ, որ մինչև հասնում է Ս-ը-ր-ի-ն-ի ասուած սարը:

Վանքը կարելի է համարել բոլորովին աւերակ, խեղճ է իւր դրութեամբ, կազմուած է սրբատաշ քարերով և բաղկացած երկու եկեղեցիներից, որոց մին վայելչաձև կամթուղիկէ ունի, ծայրում առանց խաչի. անշուշտ յիշում է ուղևորը, որ այս տեղ եւ հասել է անցեալ դարերի աւերիչ պիղծ ձեռքերը, որոնց հաստատուն վկայք կարող են լինել երկու եկեղեցեաց առաջ գտնուած կամարակապ և սինագարդ գաւիթների քանդուածները, որոնք բոլորովին աւերակ են դարձած ինչպէս №317 նկարից կերևի, միայն մնացել են գաւթի կամարները և մասամբ սիները՝ առանց առաստաղի և կողքի պա-

տերի։ Իսկ կաթուղիկէի եղած տաճարի շինութիւնը խախտուած է կամարի և առաստաղի ճաքուած լինելովը, և շուտով մեծ վտանգ կհասնի ամբողջ շինութեան քանդուելուն, եթէ կարևոր նորոգութիւնք չլինին, եթէ ոչ ամբողջովին գոնէ մասամբ՝ սպառնացող վտանգից ազատ պահելու համար, ապա թէ ոչ, այս էլ մի փոքր ժամանակից յետոյ կդասուի ի շարս աւերակաց։

Սորա կողքին կայ և այլ փոքրիկ օրօրոցաձև եկեղեցի, այս տեղ է կատարվում եկեղեցական արարողութիւնները և շատ պարզ ու ապքատ զարդարանքով—մի խաչ, մի աւետարան, երկու մոմակալ և մի ձեռագիր ճաշոց· սոքա են եկեղեցւոյ բոլոր հարստութիւնը։

Այստեղ կայ վանահայր ծերունի մի վարդապետ, Մկրտիչ վարդապետ Գէորգ վարդապետեանց անունով· սորա պապը եղել է վարդապետ, իսկ ինքը քահանայ, սա նորնծայ եղած ժամանակ կինը մեռնում է և ինքը դառնում է վարդապետ, գալիս է այստեղ վանահայրութեան, որ 25 տարի է վարում է այդ պաշտօնը։ Վանքը ինչպէս յիշեցինք, մի որ և է տեղից արդիւնք չունենալու պատճառով վանահօր սննունդն էլ Էջմիածինն ինքն է տալիս՝ տարեկան մօտաւորապէս 100 ռուբլի· եկուոր ուխտաւորներից էլ վանահօր ասելով՝ լինում է ամբողջ տարին հազիւ 8—10 ռուբլի· և յիրաւի հաւատալի է, քանի որ մի օրինակին մենք ինքներս ականատես եղանք։ Երեք տնուոր ուխտաւորներ՝ կլինէին մօտ 18 հոգի, բերել էին մի այծ և մի գառն մատաղ անելու· փայտը, պղինձը և ամեն հարկաւոր նեղութիւն վանահօր վրայ ձգեցին, երեկոյեան գնալու ժամանակ 80 կոպ· փող բաշխեցին, այս լինում է վարդավառի տօնին։ Սորա ուխտադրութիւնը լինում է տարուայ հինգ տաղաւարին, ուրեմն սորանով յայտնի բան է, ոչ նորոգութիւն կ՚լինի և ոչ վանահայրը կարող է ապրել· վանահօր խղճալի դրութիւնը եա զանց եմ առնում նկարագրել, բայց այնուամենայնիւ մխիթարվում է խեղճ ծերունին այդքան երկար ձիգ տարիներ այդ տեղ ծառայելուն համար· մխիթարվում և ուրախանում էր, որ այս տարի վանքի առաջը գտնուած հողերից 13 դեսեատին հող էին յատկացրել, այն էլ ինչպէս մենք տեսանք



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

բացի 4-ից մնացեալն անժշակելի է, քարքարոտ լինելուն համար. ի հարկէ մի վանք առանց հողի չի լինիլ, բայց ինչ արած, որ անտէրութիւնից այսօր բոլոր ունեցածը թուրքերի ձեռք է անցած և անբոլոր ունեցածը թուրքերի ձեռք է անցած և անհնարին է դարձել կարծես նորից վանքի սեպհականութիւն դարձնելը: Վանքի արևմտեան կողմը, քարեայ հասարակ՝ յածրիկ մի շինութիւն կայ, կը-տուրը հողածածկ, ինչպէս լինում է հասարակ գիւղային տները, մի մի փոքրիկ դռներով, որոց մին ախոռի տեղ է, մէկը որպէս հացատուն և մի փոքրիկն էլ վանահօր անշուք և աննախանձելի խուցը: Սոյն շինութեանց առաջ բակի մէջ կայ մի աղբիւր սառը և քաղցրահամ ջրով:

Կամթուղիկէիս եղած եկեղեցւոյ հարաւային կողմը կանգնեցրած կայ մի քարեայ քառակուսի երկար սիւն, որ աւանդութեամբ ասումն թէ՝ վանքիս նախկին առաջնորդները արեղայի ծայրագնութեան աստիճանը այս տեան առաջն են տալիս եղել, և հաւատացնում էր նոյն ծերունի վանահայրն թէ, ինքն էլ աւանդութեամբ լսած լինելով, որպէս թէ երանաշնորհ Գ. Տամեացին ծայրագնութեան աստիճանն այս տեղ է ստացած, չենք իմանում որքան ուղիղ է:

Սոյն եկեղեցւոյ կողքին մի արձանագրութիւն, որ դժուարընթեռնելի է, ասում է այսպէս, թվ.

«ՁԼԵ. . կամաւն Աստուծոյ ես Տէր Ստեփաննոս Օրբէլեան որդի Ջա-
«լալեան արք—եպիսկոպոսի տանն Սիսական եկի մեր հայրենի տունս ի վա-
«նս Վաղատնու և տեսի զհիւրանոցն զոր կտեալ էր հայր Սարգիսն վասն
«արևշատութեան Բուրթէլին և զաւակացն իւր Բէլքէնէին, և Իվանեայ
«յիշատակի իւր, կամ եղև ինձ մասնակցել այնմ արդեանց և տվել զՎա-
«ղատնի օլխազահորէն զգիւղ մեր և Կիւրդի վանս ազատ ի մեր յամէն զի
«յառաջ տուած էր. ժողովուրդ և մեք զմեր բաժին հասն տվաք իպէտս
«պանդոկին, արդ այսմ հետէ չունի ոք հրաման աթոռակալաց կամ հայ
«իշխողաց զմեր տված ի սուրբ ուխտէս հանել կամ խափանել ջանայ մեր
«մեղաչը պարտական լիցի և յերից սուրբ ժողովոյն որոշ ելցէ, մասն և բա-
«ժին ընդ խաղողացն և յուդային առցէ ամէն»

Տաճարի արևմտեան կողմում գրած է. «կամաւն
«Աստուծոյ մեք Բուրթէլս և Գուդտայս են որդիք Էլիկոմին որդւոյ Տար-
«սայիճին, եղբայր Սմբատայ, իշխանք տանս Սիսական, տեսեալ զձեռա-
«գիր նոցա զոր շինել կամելով զվաղենջուցաւ ետեալ, և խաղտեալ վանս
«Վաղատնու ի ձեռն հայր Մխիթարայ հատեալ էին սահման գետոն
«ի շրջանաքարն և քայլիճն. հայ Ծաղիկն է տվել իւրեանց հայրենեաց
«Զերիմիս գիւղ Ուզ գիւղ Շամպին հողերն իւրեանց հայրենեաց սահ-
«մանովն և ի Զնհէր Շաղուջանց հողն և ջուրիւ զայգին ամէն սահմա-
«նաւն. և խնդրեալ արձանագրեալ յիշատակ զոր անփոյթ արարեալ է-
«հաս առ մեզ և մեք կամելով արձանագրեցաք վասն յիշատակի նոցին,
«և ես շատութեան մեղ և զաւակաց մեր. և իշխողք տանս կարգեցին

« տարին մի քառասունք անխափան կատարել, արդ եթէ ոք իմերոց կամ
« յօտարաց զմեր սահմանեալ տուրքս, խափանել զգիրս, զմեր մեղացն
« պարտական լիցի և թէ առաջի աստուծոյ ամօթ երես ելցէ. իսկ տաճիկ
« կամ այլ ազգ փոխի և հանեալ կամիցի իւր մահմետին Ապիզար լինի և
« հազար հազար նահլաթ առնու թվ. ՉԿԴ.»

Տաճարի արևելեան կողմն գտնուած արձանագրութիւնը. «Մարտիրոս Էլիկոմ յիշխանութիւն Սմբատայ եղբայր
« Նորա Տարսայիճիս որ կրկին Նորոգեցի զեկեղեցիս յիշատակ ինձ.

Նոյն տաճարի դռան գլխին. «Զօհաննէս մեղուցեալ Աս-
« տուած սիրող աղաչեմ յիշեցէք ծնողքս թվ. (մնացեալը քարը կոտ-
րուած է)

Տաճարի գաւթի դռանը գրած է. «Ես Ամիրս Սրգայ
« որդի Ղազիկին Անկեղակոթցի շինեցի զգլուխս սուրբ Կարապետիս այս և
« խաչն կանգնեցի աթոռական Տէր Շմաւօն վարդապետին թվ. ՊՁԻ, ին

Մեծ եկեղեցւոյն արևելեան կողմին գտնուած մի արձանագրութիւն. «Վասակ որդի Սմբատայ շինեցաւ Հրամանաւ
« Թագաւորին Սմբատայ, ի ձեռն Շահանդուխտ Թագուհոյ բարեպաշտի,
« որ տաճկերէն Ամիրփիրի կասուի.»

Սոքա են Որոտնայում գտնուած և հաղիւ կարդացուելու արձանագրութիւնները:

Վանքից դուրս գալով իջնում ենք ցածը Ո-ը-ա-ա գիւղը որ է Յօհան Որոտնեցւոյ * ծննդավայր Որոտնայ աւեր գիւղը. գիւղի ծայրին Լորաձորի իսկ բերանում՝ գետի ափին մի պարտիզի մէջ ըղխում է մի երկու հանքային ջուր, որոց մին գելդերեան ջրի համ ունի, միւսը՝ որի տեղը խոր աւազանի ձև է ստացել, կեղտոտ ջուր է և թուրքի կնանիքը իրենց կեղտոտ շորերն են լուանում: ասում են առողջարար ջուր է հիւանդների համար, մանաւանդ ուռուցք ունեցողների, այդ օրը այս տեղ մի թուրք երիտասարդ տղայի պարկեցրել էին ջրի մէջ, հարցրինք թէ ինչու են այդպէս պարկեցնում: պատմեցին, որ սա 7—8 տարի է այդպէս ուռած է մանաւանդ փորը և ոտները, ասել են որ բերեն այդ ջրի մէջ 8—10 օր պարկեցնեն, օրը ½ ժամի չափ և յետոյ կլաւանայ. այդ թուրքը 5 օրից վերջը մենք տեսանք ճանապարհին, որ կատարեալ առողջացած էր: Այս տեսակ ջրերով այս կողմերը բաւական հարուստ է, բայց զարմանալին այն է, որ մինչի օրս դորանց գնող մասնագէտներ չեն եղած կարծեմ, որով այս օր չէ օգտվում հասարակութիւնը ինչպէս հարկն է:

---

* Յօհան Որոտնեցին, որ էր հայոց վարդապետ, եւ Կախիկ եւ էր կոչվուր. Որոտնայ գաւառից Վաղագնի գիւղից իշխան Իւանի որդին, Որոտնայ գաւառից լինելով Որոտնացի է կոչվում, աշակերտել է նոյնի վարդապետին. իւր վարժապետ նոյնի մահուանից յետոյ մեծ անուն ունեցաւ եւ նոյնպէս շատ աշակերտներ. ինչպէս են Ղրիմեցի Մաղաքիա վարդապետ. Յովհաննէս վարդապետ Մեծոփեցին. Գրիգոր Տաթեւացին եւայլն ստ դալով իւր բազմաթիւ աշակերտների հետ Ունիթոռների ժամանակ երնջակու վանքին ուռաջնորդ է կարգվում (որով նկոռհ առեհ ջուհիրոռս) եւ եկեղեցական ու ազգաշահ յայտնի գործեր կատարելուց յետոյ վախճանում է 1388 փրկչ. թուին ուղիղ Գ. տարի Մաղաքիայի մեռնելուց յետոյ. Ունի զանազան եւ բազմաթիւ երկասիրութիւններ, որոնցից նշանաւորներն են մեկնութիւն աւետարանին ցովհաննոս. համառօտ մեկնութիւն ԺԴ. բղթոյն Պօղոսի. քարոզ եւ բանք—եւ յամենայն վեցերորդի. նախերգանք մեկնութեան կամ քարոզի. հաւաքածոն երկոց ճառից փիլոնի. վերլուծութիւնք Դիոնիսիոսց բանից Պորփիւրի. յոռնմոռնք ստորագրութեանց. եւ Պերիարմենիոսին Արիստոտելի. եւայլն զանազան բազմատիսակ օգտաշահ գրուածներ.



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Անկանալով Որոտնայ բերդը բարձրանալ. նախ անցնում ենք Որոտնայ վանքի շրջակայքիցը, որը ինչպէս պատմութիւնից յայտնի է, վաղ ժամանակ այստեղ բազմամարդ բնակութիւն է ունեցել, և այս՝ հաստատում է ներկայ բազմաթիւ շինութեանց փլատակները, բընակարանների, գերեզմանատներն և այլն, որոնք սպռած են Որոտնայ գետի աջ ու ձախ ափերի և մօտակայ բարձրաւանդակների վերայ,* այս շինութեանց մէջ տեղում Լուսաւորչի իսկ բերանում մի կամուրջ է ձգուած, որը ինչպէս երևում է վերջին ժամանակների գործ է, կամուրջի շինութեան ժամանակ ներկայ եղող, մի վստահելի ծերունու պատմութիւնից նայելով 1853 թուին Ռոնակոթեցի Մելիք Թանկին է շինել տուել, կամուրջի ճակատին երեք տեղ արձանագրութեան համար քարեր կան դրուած, բայց առանց արձանագրութեան, որովհետև Մելիք Թանկին խոլերայից մեռնում է կամուրջի շինութիւնը հաղիւ դեռ վերջացած:

Այդ կամուրջի և գետի ափից սկսած մի քարաժայռ է բարձրանում, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անմատչելի բերդ, որ տեղաւորուած է Ուղտանման մի սարի վերայ: Այս բերդին ոմանք Որոտնայ բերդ են անուանում և ծերունիներից շատերը աւանդութեամբ պատմում են, որ վերջին ժամանակի պատմական Դաւիթ բէգը շատ անգամ այս տեղ է ապաստանել իւր զինակիցներով, գուցէ սա լինի Չամչեանի պատմած Հ. Հայապոնս բերդը ի Սիւնիս, որը 1387 փրկչ. թուին Լանկթամուրի Սիւնիքը աւերելու ժամանակ և սորա հասուցած աղետից ականատես եղող ի մի գրուածքից յառաջ է բերում ասելով. «Աւերեցին աշխարք մեր, և կոխան եղեն ազգ հայոց, ոմանք «ի գերութեան վարեալք՝ արք և կանայք, և կէսք առաթուր դիպեալ «սրախողխող գալարեալ, առ հասարակ քահանայք և աշխարհականք գէշ «անկեալ դիակամբ անթաղ ընկեցեալք. և այլք ի բազմաշան տանջանաց «ոսոս մաշեալք, Ոմանք հրով կիսարեալք տոչորեալք, և այլք ի սովոյ «գազանաբեկ վտանգեալք, կէսք խստամբեք կրիւք չարչարեալք, և այլք «երկիւղիւ պաշարեալք, և մեր նստելով իբր ի մեծաղոյն կամաւոր դիպա- «հոյ՝ Հ. Հայապոնս կոչեցեալ ամրոցի, ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զ- «ոյինակ մեծի սատակմանարտուն ատենի.» Գիրք Զ. Գլ. Ա. երես 421։

* Նախկին Որոտն գիւղը՝ Յովհան Որոտնեցու ծննդավայրը տեղաւորուած է գետի ձախ ափի վերայ, որ այժմ աւերակներն են միայն նշմարելի։

Բերդը իւր երեք—արևել. հիւսիս, և արևմտեան կողմերից քարաժայռոտ լինելով անմատչելի է եղած. բերդը կարելի է մտնել միայն հարաւային կողմից, որ գետի եզերքից սկսած մի ճանապարհ է ունեցել վաղ ժամանակ, սոյն ճանապարհով մի վերստաչափ բարձրանալիս, ուղևորը տեսնում է բազմաթիւ փլատակ և աւեր սենեակների ու շինութիւնների հետքեր, որոնք միմեանց կից լինելով՝ բերդի այս կողմն էլ անվտանգ են դարձրել թշնամուց:

Վերոյիշեալ փլատակ շինութիւնները հաստատուած են յարդ տափարակ տեղւոյ վրայ, որի արևելեան կողմը միջնաբերդն է հաստատուած շուրջը իւր բնական դիրքի յարմարութիւնից բոլորովին անմատչելի է դարձել, և ունի աւելի քան 20 սաժէն բարձրութիւնոյն տափարակ տեղից:

Ինչպէս ասացինք՝ այս միջնաբերդն էլ ամբողջովին քարաժայռ է, և եթէ մասնաւոր բաց տեղեր կան, սորանք էլ ամուր պարպապատած են, թողնելով միայն մի փոքրիկ նեղ անցք միջնաբերդը բարձրանալու:

Միջնաբերդում դուք տեսնում էք ձեր աջ կողմում մի փոքրիկ մատուռի, որի առաստաղը նոյնպէս կործանուած է, մնում է միայն չորս պատերը, իսկ ձախ՝ այսինքն միջնաբերդի հիւսիսային կողմում ժայռի ամենաբարձր տեղում հաստատուած է հաւանականաբար դիտանոցը, որ ժայռի մէջ տեղում շինած է փոքրիկ մի սենեակ առանց երկու կողմի պատերի:

Մատուռի առաջ ինչպէս ականատես անձինք պատմում են, կանգնած է եղել մի մեծ գերեզմանաքար՝ երկու և կէս արշին լայնութեամբ ու մի արշին բարձրութեամբ, որ այժմ՝ ինչպէս է եղել, ընկած է քարակոյտների մէջ միջնաբերդից ցածր, որի մի կողմը գտնուած արձանագրութիւնը մեզ չյաջողուեց դուրս բերելու. սորա միւս կողմում քանդակուած է մի ձիաւոր, որը ձեռին բռնած ունի Ս. Խաչը և միւս ձեռին նիզակ, ուր սրընթաց վազում է առաջևից փախչող երկու կենդանիների յետևից, որոնք աւելի նմանութիւն ունին շների՝ քան թէ մի ուրիշ կենդանիների:

Բերդի մէջ երևում են միմեանցից 100 արշինաչափ հեռու երկու անցք. մինը հաւանական է, որ ջրհոր եղած լինի, իսկ երկրորդը փախուստի ճանապարհ, բայց հակառակ մեր աշխատութեան չյաջողուեց մեզ գտնել յիշեալ անցքերի ելքը, անցքերը լեքցուած լինելու պատճառաւ:

ԼՈՐ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՈՒՌԸ № 321
ՍՊԻՏԱԿ ԽԱՉԵՐԸ № 320
ՏԱՐԱԶՆԵՐ ՍԻՒՆԵՑԻ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՑ № 322

Հուրս գալով Որոտնայ բերդից մտնում ենք Լոբաշոր * ուր տեղաւորած է չորս միմեանց մօտիկ գիւղեր և որոնք մեր ճանապարհի վերայ են, Դարաբաս, Դէպոնդ, Լոբ և յետոյ Շէնդ, որոնք զարդարուած են կանաչազարդ պտղատու ծառերով, պարտէզներով և այգիներով, ժողովուրդը պարապում է երկրագործութեամբ, և մասամբ անասնապահութեամբ, Լոբ, Դէպոնդ և Շէնդ գիւղերը ամբողջապէս հայ բնակիչներ են, իսկ Դարաբաս գիւղը հայ և Թուրք ազգութիւնից խառն, սոյն երեք գիւղերը միմեանց շատ մօտիկ լինելով կարելի էր և մի Ուսումնարան պահել, որից զուրկ լինելով մանկտիք, թափառում են փողոցները:

Լոր գիւղն սահմանը մտնելիս նկատվում է մի քանի հնութեան նշաններ: Սոյն գիւղն հիւսիսային կողմը մինչև Լոր մտնելը հանդիպում ենք մի գերեզմանատան, որը գիւղից՝ համարեայ 1/4 վերստաչափ հեռաւորութեան վրայ է գտնվում, այս գերեզմանատան մէջ նշանաւոր և ուշադրութեան արժանի մի զոյգ խաչարձան կայ, որին տեղացիք Սպիտակ խաչ են անուանում, այս տեղ ամփոփած է՝ ինչպէս աւանդութեամբ ընդունած, Օրբէլեանց տոհմից ոմն, որի վերայ կանգնեցրած են կոփածոյ քարերից մատարձան—յիշեալ խաչաքարերը տես № 320 նկարը. բաւական գեղեցիկ քանդակներ ունի, և վերան գրուած է յիշատակարան, ինչպէս երևում է նկարի մէջ՝ շատ տեղերը եղծուած են: Նաև կան սոյն խաչարձանի առաջ և ուրիշ տապանաքարեր թուով 16, որոնցից մի քանիսը թէև ունին արձանագրութիւններ, բայց եղծուած լինելով որոշ մի նախադասութիւն չէ կարդացվում, բացի մինից, որ դժուարաւ կարդացվում է և գրած է այսպէս, «այս է հանգիստ գեղեցիկ ծին, ծաղկածին, ծաղկափթիթ. Աննա խաթունին, փոխեցաւ ի թվ. ՉԻԶ ամ. մասիկ», սոյն վերջի բառս Մասի չէ իմացվում ինչ կնշանակէ այս տեղ. գուցէ լինի քարտաշի անունը:

Այս տեղից մտնում ենք Լոր գիւղը, ուր մեր ուշադրութիւնը գրաւում է նոյն գիւղի մեծադիր՝ Ս. Գէորգ անուն եկեղեցին և մնաւանդ սորա

---

* Այս ձորը երկու զուգահեռական լեռնաշղթաներով ձգուած է դէպի հարաւ 8 վերստ երկարութեամբ, լեռնաշղթաներն միանում են չոչ դ՝ոյ կոչուած լերան հետ, որից բղխած բազմաթիւ աղբիւրներից մի փոքրիկ գետակ է կազմում, և նոյն հովտի միջով թափվում է Որոտն գետը, Պէտք է ասել, որ այս հովիտը իւր գեղեցիկ լեռներով, ծառատունկ այգիներով ու քաղցրահամ աղբիւրներով գերազանցում է Սիսեանի բոլոր գիւղերից,

միակ արևմտեան դուռը, որ բաւականին գեղեցիկ, հիանալի քանդակներ և յիշատակարաններ ունի։

Եկեղեցին օրօրօցաձև է և շինութիւնը կազմուած է հասարակ քարերից, ներքին կողմը առանձնակի սիներով հաստատուած և է անշուք։ Եկեղեցին ինչպէս մի արձանագրութիւնից երևում է՝ շինել է Ագուլեցի Խոջա Պօղոսն իւր ծախքով իւր յիշատակին, թուին հայկականի (ՌՃԻԹ) սորա դուռը ինչպէս վերև յիշեցինք և տեսնվում է № 321 նկարից, թէև փոքր է մուտքը, բայց և այնպէս իւր շուրջը եղած կամարը բաւականին ընդարձակ ու գեղեցկաքանդակ է։ Կրկնակի կամարաձև շրջանակներով զարդարանք է տրուած։

Այս տեղ մեր նպատակին վերաբերեալ նկարելու գործերը վերջացնելով կամեցանք գիշերել գիւղում ինչ ինչ պատճառներով, նախ՝ որ օրը տարաժամ էր և շատ դժուարութեանց հանդիպելու էինք Տաթև գնալու համար սորա սարը բարձրանալումը։ և երկրորդ որ հետևեալ օրը Վարդավառի տօնը լինելու պատճառաւ Լոր գիւղում ուխտաւորների մեծ բազմութիւն էր հաւաքվում մօտակայ և հեռաւոր տեղերից, Զանկեզազուրի և Սիսեանի համարեայ բոլոր գիւղերից— Բռնակոն, Մաղաս, Ղարաբիլիսա, Ալիլանիա, Ո-ղ Խոտ, Տարնա, Շինոհայր, Գորիս և այլն գիւղերից, նաև Հուշի քաղաքից։ այս ուխտադրութեան մասին պատմուած առասպելները հետաքրքրութիւնս շարժեցին, ուստի կամեցայ ինքս ականատես լինել, սորա համար էլ հետևեցի նոյն հարաւ որ ուխտաւորների հետ միասին գնալ մինչև նոյն ուխտատեղին, որ անուանում են Ս. Յովհաննէս, որը գտնվում է Լորու հարաւային կողմում մի բարձրադիր տարաձութեան վերայ։ Այս տեղ արդէն տեսարանը փոխվում է։

Յովհաննու Մկրտչի մատուռը, որը նման է գիւղային անշուք և օրօրօցաձև մի փոքրիկ մատուռի, կազմուած հասարակ քարերից և տեղաւորած է, փոքրիկ մի հովտի մէջ գեղեցիկ դիրքի վերայ։

Մատուռի արևելեան կողմը շրջապատած է ուռի և բարդի բազմադարեան ծառերով, իսկ հիւսիսային կողմը գեղեցիկ հարթութիւն, ուր լցուած են, մեր տեսած նոյն բազմութիւնը, արք և կանայք, փոքր և մեծ հասակի, մեծ մասը բոկոտն, դուք կտեսնէք այստեղ զանազան տարազի հագուստներով կանայք, տղամարդիկ և հարսներ, որոնք խումբ խումբ կազմելով մրջիւնի նման ծածկած են այդ հարթ տարածութիւնը, անկարելի է լինում այս խառնիճաղանչ ամբոխի մէջ մտնելը, ընտրենք ուրեմն մի բարձրադիր տեղ, դիտելու, և այդ ուխտաւորների արարքը տեսնելու, որոնք ոչ այնքան

ուխտ կատարելու համար են եկած, որքան քէֆի, ինչպէս առ հասարակ հայ ժողովրդի սովորութիւնն է քէֆ անելու համար մի ուխտատեղի ընտրել, նոյնը և այստեղ անպակաս է այդ։ Ընդէն մութը ընկել է, ամէն տեղ կրակների և ջահերի լուսով լուսաւորուած է, չորս կողմից զուռնա նաղարայի ձայները, և մի քանի տեղից այլ և այլ ուրախագաշնակ երգիչների ձայները, աղաղակը միւս կողմից, ծծկեր մանուկների ճչվլոցը ու լացը մի կողմից, մատաղացու այծ ու ոչխարների մայոցները և այլն. և այս բոլորը միասին խառնուելով խլացուցիչ և խառնաշփոթ տեսարան է ներկայացնում։ Մտնենք մատուռը, որ ահա առասպելն այս տեղ ենք տեսնելու։

Այս ի՞նչ է, զարմացմամբ հարցնում էք երբ կմտնէք մատուռն մէջ, որովհետև մի բոլորովին նոր և արտասովոր տեսարան է բացվում ձեր առաջ. փոքրիկ մատուռի մէջ գետնի վերայ փռուած են 4—5 հարներ, ոմանք թաւալվում են, ոմանք ձեռնամած իբր թէ անշնչացեալ նիրհում են, մի ուրիշը ուշաթափուած՝ ամբողջ մարմնով երբեմն երբեմն ցնցումներ է գործում այլանդակ ձևերով, մի ուրիշը բարակ ձայնով իբր քնի մէջ մեղեդի է երգում, միւսը գուշակութիւններ է անում, կամ զառանցում, և երբեմն մատաղացու է պահանջում իւր ամուսնոցը (անպատճառ սորա ամուսինը մատաղացու չէ բերած կասկածում էք դուք) բայց ոչ ինչ, սորա ջերմեռանդ և հաւատացեալ ամուսինը թողնում է կինը այդ տեղ այն դրութեան մէջ և գնում մի մատաղացու ճարում (որը կարելի է գտնել այդ տեղ վաճառողներից) բերում Աղա՛յ*(. Յովհաննու Մկրտչի) առաջ և բղաւելով հասկացնում է, որ բերել է, ուշաթափուած կինը այդ լսում է և ուրիշ պահանջներ է անում, խրատներ է տալիս ամուսնուն և այս ու այն անձին. գործի յաջողութեան համար խորհուրդներ է տալիս՝ դարձեալ Աղա՛յի հրամանով. դուք այս ուշաթափ հարսի արարմունքը հետաքրքրութեամբ մինչդեռ մոտիկ էք առնում, յանկարծ միւս կողմից ուշաթափուած ու կռնակի վերայ փռուած կինը, իւր երկու ձեռները անպատճառ զգալի կերպով գետին է խփում. սարսափում էք դուք այս տեսարանից, բայց ոչինչ, այդ պատահել է նորանից, որ մի ոմն կորուստ է ունեցել, և եկել այդ ուշաթափուած հարսի ճկոյդ մատը սեղմում ու սպասում, որ կորուստի տեղը ցոյց տայ, բայց սա չէ բարեհաճել յայտնել և կամ Աղա՛ թոյլ չէ տալիս, որովհետև մեղաւոր է։

Մի ուրիշը նոյնպէս մի այլ ուշաթափվողի ճկոյտ մատն է սեղմում և հարց է առաջարկում լուծե-

* Այդ ուխտատեղին Յովհաննու Մկրտչի համար Ա.Ղ. են ասում։

լու, և սա մեղմ երգելով պատասխանում է. «Քո կորուստը մի կարճահասակ, աչերը ճաղատ և շատ մեն եկող (դատարկաշրջիկ) կնոջ մատ է, թէ կորուստը ինչ է, չգիտէ, գողացողի անունը ինչ է, այն ևս չգիտէ ևայլն»։ Մի ուրիշը և այլ խայտառակ բան է հարցնում, թէ ինչ է պատասխանում, կամ ինչ վայել է այդ սրբատեղում, այդ ես չեմ կարող, թող հետաքրքրվողը գնայ մի վարդավառի տօնին ինքը տեսնէ ու լսէ։ Ահա այս տեղ դուք տեսնում էք սարսափելի խափեփայական մի նախապաշարմունք, որը շփոթում է բարեպաշտ ժողովրդի մտքերը և հարկադրում են կեղծ գուշակութիւններով նախ՝ խաբել իրենց ամուսիններին։

Այստեղ դուք տեսնում էք բեմի վերայ ուրիշ տեղից եկւոր մի քահանայի, որը նշանակուած է ուխտաղրամները և արդիւնքը հաւաքելու, դուք մեղադրում էք սորան, որ թոյլ է տալիս այդ խայտառակ տեսարանի կատարուելուն, այն էլ մի սրբավայրում, բայց ինչ անէ խեղճը, եթէ թոյլ չտայ և արգելք լինի այդ խայտառակ տեսարանը կատարուելուն, այն ժամանակ տուր ու դմբոց, վէճ և կռիւ կծագի, ինչպէս հաւատացնում էին այս, ուրիշները։

Մէկ էլ յանկարծ տեսնում էք, որ այդ ուշաթափուածներից մէկը փոքր առ փոքր ուշքի գալով ծնկաչոք գնում համբուրում բեմի վերայ եղած մասունքները, մամ վառում ու գնում հանդարտիկ քայլերով, սորա տեղ ուրիշն է ընկնում և սկսում ձեռները թափ տալ գետնին, այսպէս շարունակվում է մինչի առաւօտ և կամ մինչի մատաղացուները կարուելուն, որ ոմանք դեռ լոյսը չբացուած արդէն իրենց մատաղը վերջացնում ու ճանապարհ են ընկնում, միայն քէֆ անողները մինչև արշալոյս մնում են։

Ուստի չարժէ այդ տեսարանում անքուն մնալ և լուսացնել, գնում ենք հանգստանալու։ Թէ ինչ մատուռ է այդ և ինչ ուխտատեղի, մի որոշ բան չենք կարող իմանալ, որովհետև ոչ մի արձանագրութիւն չէ երևում և ոչ էլ պատմութեան միջից. բաւականանալով այս տեղ մի քանի տարազների նկար վերցնելով յետ դառնալ, որոց մին հետաքրքիրների համար գետեղում ենք այս տեղ տես № 322 նկարը, որ Սիսականցի կանանց է վերաբերում. կան կանայք որ հագած են քեաթիպա՝ բոլորտիքը կարած ազնիւ տեսակի մուշտակ, և կան հարսներ, որոնք դեռ իրենց երիտասարդ հասակում երեսնին բարակ քողով (մի աղլուխով) ծածկած են պահում, անկարելի է բաց անել, որովհետև ամօթ է համարվում, իսկ պարանոցից մինչև կուրծքը ապասանոցներ, զանազան հին արծաթեայ դրամներ շարէշար կախ են տուած։



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



Худож.-Лит. Р. Шалбазяца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Հառնանք այժմ Լոր գիւղի հարաւային կողմը գտնուած (ըստ պատմութեան Օրբելեանի Դաղբոյլա անուանուած) բարձր սարը անցկենալ, որ մի երկար օձապտոյտ ձորակի մէջ ենք մտնում, և դեռ ձորը չելած սարի բարձրում եղած ժամանակներս ուղեցոյցս ձայն է տալիս երեսը խաչակնքելով և ասում, աղա պէտռ-մէս վանդը, դեռանմ զօրս-ընդին, և յիրաւի բարձրից դէպի ցածը նայելիս, հեռուն մի ինչ որ սպիտակ գմբէթ է երևում, ուղևորը կասկածում է Տաթևի գիրքի մասին գրուածքների վերայ, թէ մի գուցէ սխալուելով գրում և. նկարագրում են, թէ Տաթևի վանքը մի ժայռոտ սարահարթի վերայ է կառուցած. մինչդեռ դուք այս սարի վրայից տեսնում էք և կարծում, որ նա լինի հաստատուած խորը ձորի անդունդի մէջ. բայց երբ 2 ժամից յետ՝ կմօտենաք վանքին, կտեսնէք, որ վանքի հարաւ արևելեան, հարաւային և հարաւ արևմտեան կողմերը ունի սոսկալի խորութեան ձոր. հարաւային և հարաւ արևելեան կողմերը սեպաձև մերկ ժայռեր, որոց վերայ շինութիւններ է կառուցած սորանից 997 տարի առաջ Սիւնեաց մետրոպոլիտ Յովհաննէս եպիսկոպոսի ջանիքը. որք են վանահօր սենեակը, վանքի նախկին ունեցած միաբանութեան սեղանատունը, սորա կողքին է և ընդարձակ խոհանոցը, հացատունը, մառանը, անպարը և մի քանի այլ սենեակներ, որոց ամենքի լուսամուտները բացուած են ձորի վերայ, ուր տեսանողի աչաց սիրուն և սքանչելի տեսարան է ներկայացնում:

Քանի մօտենում էք վանքին աւելի մօրակում էք կենդանուն, որ ձեզ շուտով հասցնէ, մինչդեռ փոքր ինչ առաջ դանդաղ էիք գնում ձորի միջով անցնելիս, որովհետև ձեզ խիստ հետաքրքրում էր ճանապարհի գեղեցկութիւնն բացուելով առաջնիդ միշտ նորանոր տեսարաններ, մի կողմը բարձրաղիր լեառ սորա տակից վազող պարզ, վճիտ գետակը, որը վանքի ջրաղացները բանեցնելուց յետոյ արագ քայլերով գնում է կուռելու վանքի տակ եղած ժայռերի հետ և ապա, սահում, անհետանում է ողորապտոյտ ձորակների մէջ. միւս կողմը ոսկեգոյն արտերը, որոնք գլուխնին խոնարհեցրած սպասում

բեան և պատմական, այն էլ շէն՝ վանքի էք հանդիպում, և կամ երանաշնորհ Գրիգոր Տաթևացւոյ գերեզմանին համբոյր մատուցանելու իղձը, թէ՝ շինութեան պատկառելի ծերութիւնը, կամ վանահօր քաղցր տեսութիւնը վայելելու փափաքը և այլն։

Որ վերջապէս հանում էք վանքի պարիսպներին, որի չորս անկիւններում կանգնեցրած են մի մի հաստատուն բուրգեր, կարծում էք, որ մի անառիկ բերդի էք հանդիպում, պարսպի հիւսիսային կողմի միակ դարպասից ներս մտնելիս տեսանելի է լինում բազմաթիւ գործաւորների աշխատութիւնը, մինը կիր է մաղում, միւսը ջուր է կրում, և մի ուրիշը սրանցից ցեխ է պատրաստում, շատերը՝ կոպիտ և անտաշ քարերին մաքուր և նուրբ ձևեր են տալիս, մի քանիսները իրենց գլխաւոր վարպետի ցոյց տուած քանդակների օրինակները դուրս են բերում քարի վերայ. մի հարա հրոց ամբողջ բակը բռնել է, անշուշտ հասկանալի է, որ մի շինութիւն կայ

են իրենց օրհասին. աւելի հեռուն անտառոտ լեռները իրենց երբեմն մերկ սուր կատարներով. վերջապէս այն ամէն սիրուն և սքանչելի տեսարանները, որ բնութիւնը կատարելագործել է այս տեղ՝ հեռաքրքրութեամբ դիտում և զննում էիք. այժմ անհասկանալի է ձեր շտապելու պատճառը. այլ ևս ձեզ չէ հետաքրքրում մինչև անգամ Տաթև գիւղն և սորա բնակչաց վերայ տեղեկութիւն ըստանալու ցանկութիւնը, մերկ և բոկոտն մանուկների ճչվլոցը, ծուռ ու մուռ և նեղ փողոցների անմաքրութիւնը, բնակչաց ողորմելի և խեղճուկ՝ եթէ կարելի է ասել բնակարանները, որ միմեանց վերայ յենուած մի մի փոքրիկ խոռոչներ կարելի է համարել, բացի մի քանիսից՝ որ միայն բարձրութիւնից աւելի մեծ զանազանութիւն չեն ունենալ միւսներից, և սոքա էլ Տաթևացի մի երկու հայ բէգերին է պատկանում. այլ ինքնաբերաբար շտապում էք մի ժամ առաջ հասնել ձեր առաջ երևացած վանքը, ուր արդէն մի 1/4 ժամից հասնելու էք. թէ այս շտապելու պատճառն ի՞նչ է, ես դժուարանում եմ մեկնել, արդեօք այն, որ մի բազմաղա-



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Художъ.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

այս տեղ * ուզում էք վանահօր տեսնել, որ ձեր ճանապարհի վաստակութիւնը փոքր ինչ հանգըստացնելու համար տեղ ցոյց տայ, բայց չէ երևում, դէս ու դէն ընկնելուց յետ հաղիւ գտնում էք, որ նա՝ տաճարի բարձրում Իկեղեցի՝ վերայ քարտաշների մօտ՝ գործաւորների նման աշխատում է, վերայ զլուխ փոշոտած, կանգնել է հսկելու և ապահով լինելու համար թէ վարպետը՝ քարը պատին հագուցանելում լաւ ու կարգին և կամ հաստատուն անո՞ւմ է։

Վանահօր յետ տեսնուելուց և մի փոքր հանգըստանալուց յետոյ սկսեցինք Տաթև վանքի մէջ մեզ հարկաւորելիք և մի քանի նշանաւոր բաները նկարել։

Տաթև վանքը՝ ինչպէս ասացինք վերև, քառակուսի հաստ պարսպի մէջ է տեղաւորած հասարակ քարերից՝ բայց հաստատուն շինութեամբ տես № 331 նկարը. և ինչպէս յայտնի է հնադարեան շինութիւն լինելով տաճարի քարերից մաշուած և խախտուած են, տանիքը, կամ թուղեկէի ծածկոցը, այլ և ուրիշ շատ տեղեր, որ եթէ չնորոգուին, շուտով կկխախտուի ամբողջ շինութիւնը։ Այս տեսնելով վանահայր Անանիա վարդապետ Ամատունեանը, որ 6—7 տարի է տեղւոյն վանահայրութեան և մի և նոյն ժամանակ Սիւնեաց հոգևոր Առաւարութեան նախանդամի պաշտօնով Տաթևումն է լինում, նախատեսելով շինութեանը սպառնացող մօտալուտ վտանգը՝ յայտնում է բարձրը. հոգևոր իշխանութեան Ս. Սինոդին, որն որ կարգադրում է ժողովարարութեամբ հարկ եղած նորոգութիւնը կատարել, յիշեալ եռանդոտ վանահօր շնորհիւ յաջողութիւն է ունենում հանգանակութիւնը որ ամեն մի հայ պարտաւոր է այսպիսի բազմադարեան հաստատութեան գոյութիւնն պահպանելուն օգնել, սորան աւելի օգնում են Խոզուաբնակ հայերը. այժմ մի տարուց աւել է որ սկսել է վանքի նորոգութիւնը, որը վերջանալու վերայ է միայն տաճարի վերայ եղած մասերում, նաև ապրել ամսից ի վեր սկսել է տաճարի արևմտեան միակ դրան առաջ կանգնեցել մի հաստատուն քարեայ և չքնաղ զանգակատուն հայկական ճաշակի քանդակագոր-

* Իմ Տաթև այցելութեանս ժամանակ արդէն սկսուել էր նոյն վանքի մէջ նորոգութիւնն։

ծութեամբ, նախապէս սորա տեղ եղել է իշխանաց դամբարան անունով մի գաւիթ, որը շինել է նոյն շինող Յովհաննէս եպիսկոպոսը, Աշոտ Թագաւորի օրով Հայկ. 355 թուին։

Տաճարը լայնանիստ է և մեծ կամարակիր, շինութեան արտաքին կողմում տեղ տեղ արձանագրութիւններ կան յիշեցէ՛ զԳէորգ անուն Ծառայս։ յիշեցէ՛ զՅովհ՝ Նորատոր քահանայս։

Այս և սորա նման նախադասութիւններով. արևմտեան դրան վերայ ծաղկաքանդակ խաչաքարեր կան, որ Նորոգութեան պատճառաւ վայր առնուած էր, որոնք Նորոգելուց յետոյ դարձեալ իրենց տեղերն դրուելու է, սորանց նկարները վերցնել արժան համարեցի, ինչպէս տեսնվում է № 323—324 նկարներից, որոց մէնին 323 № ի վերայ գրած է երկու կողքին զՏէր հայցապէտ Սի՛ՆԷՈՅ Եպիսկոպոս յիշ.., իսկ միւս մեծ քարի № 324ի շուրջը «զՏէր Յովհաննէս զնոր ՝ՅԷՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ... սոցանից վայր տաճարի գուռն է, որ սեաւ փեսից է վերան փորագրութեամբ գանդարանք է տրուած ինչպէս № 328 նկարից կերևի, սորա վերին մասումն էլ գրուածք կոյ այս օրինակ. ԶԲ. ԵՒ ՏԷՐ Հայրապետս ծառայ բարձրելոյն կանգնեցէ՛ զդասերս Նորոգեցի զդուռս զիս աղաւթս յիշեցէք աղաչեմ։

Դարձեալ սոյն դրան բարձրում լուսամուտի վերայ էլ գրած է. զՅովհաննէս անարժան ի քահանայս յիշեցէք։

Տաճարի արևմտեան դրան առաջ ինչպէս յեշեցինք՝ շատ առաջ ունեցել է գաւիթ կամ իշխանաց դամբարան, որը կառուցել է՝ Սիւնեաց պատմիչի գրուածոց նայելով նոյն մեծ Յովհաննէս եպիսկոպոսն. և շինեաց ի դրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբարանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց։ Գլ. 41 երես 271. որը այժմ քանդուած և սորա տեղ շինվում է նոր զանգակատունը. այս տեղ է եղել իշխանաց և մի քանի զօրավարաց դամբարանը. նոյնպէս եկեղեցոյ շինող Յովհաննէս եպիսկոպոսի շերիմը, որը նոր զանգակատան հիմքը դնելու ժամանակ բացվում է գերեզմանը և դուրս է գալիս ոսկերոտիքը, որի ապդերը՝ վանահօր ասելով 11 վերշոկ է եղել, մի այլ գերեզմանի միջից պլաք է դուրս ընկել, որով կարծում են՝ թէ սա մի վերաւորուած զինուորի եղած լինի։

Այս նորաշէնոյց գանգակատան առաջ կայ՝ մի



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

323 ՓԱՆԴԱՆ ՏԱՓԵԼԻՆ

324 ՓԱՆԴԱՆ ՏԱՓԵԼԻՆ

325 ՍԻՍԻԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

այլ գերեզմանաքար, որ վերջին ժամանակներիս առաջնորդ Տաթևացի Մարտիրոս արքեպիսկոպոսին է պատկանում, վերան այս օրինակ արձանագրութեամբ, « Այս է տապան Տաթևացի Տէր Յակոբեան Մարտիրոս արքեպիսկոպոսի և Մեսրոպոլտի Սիւնեաց նահանգի, վախճանեցաւ յամի տեառն 1830 Հոկտեմբերի ժդ։» այս այն Մարտիրոս արքեպիսկոպոսն է, որ 1826 թուին Էջմիածնի մեծ վնաս հասցնելից յետոյ Մաղաքիա վարդապետի հետ գերի է տարվում Դաւրէժ, իսկ միաբանութիւնը, որ 70 ից աւելի հոգևորականներից է բաղկացած եղել, ամբողջովին ցրվում է։

Տաճարիս հարաւային կողմում գտնվում է Գրիգոր Տաթևացւոյ գերեզմանը կամթուղիկէի ձևով շինած գերեզմանաքարով տես № 327 նկարը, Գրիգոր Տաթևացին ընիկ Արճէշ աւանից է (Վասպուրական աշխարհի) միաբան Երնջակու Ապրակունեաց վանքի, աշակերտել է Յոհան Որոտնեցուն, յետոյ գալով Տաթև, իւր բնակութիւնը այս տեղ հաստատած լինելով կոչուել է Տաթևացի. սա Ունիթոռների դէմ թէ բանիւ և թէ գրով մարտնչողներից մինն էր, մեռնում է Փրկչական 1398 թուին և թաղվում այստեղ, նորա զանազան գրուածքներից նշանաւորներն են համարվում, Համառօտ Բացատրութիւն Նէրսէսեան Պատմութեան, Վէրլուծութիւնք Դանիէլի Անանուղիի. Լուծմունք Պատարագաց Կէրղի. Լուծմունք Գրոց Նիւանեան Արքեպիսկոպոսի և Գէորգայ, երգ երգոց, Մեկնութիւն Յովհաննու, Ուկեփորիկ. Հարցմանց գիրք, Փոքր հարցմունք, որ է լուծումն նորա առ հարցմունս Գէորգայ Եպիսկոպոսի. Պարագ գիրք Խայլի, շատ գրուածներ։

Հիրիմի վերայ ունի հետևեալ արձանագրութիւնը։

« Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ սուրբ մատուռս եօթնարբեան բարու-
« նապետին և երկրորդ Ոսկեբերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ
« և չորրորդ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն ձեռամբ բազմաշ-
« խատ և օգտաջան Սիւնեաց պետի Տեառն Յովակիմայ Սիւնեցւոյ ար-
« դեամբ և ծախիւք Բռնակոթեցւոյ այսինքն Տէր Գէորգ Տէր Յակոբ
« և Տէր Յարութիւն քահանայիցն նաև Կարապետին և Մկրտչին Յակոբջա-
« նին Սիմէոնին Ադգէին Յովակիմին Պետրոսին Գրիգորին և Մարտիրոսին
« Քեարամղուլոյն Ստեփանին և Յոնանին Յարութիւն Մօսիսին Մկրտչին
« Շահնազարին և Աստուածատուրին այլ և բարեպաշտուհի կանանցն Նազ-
« լուին Հուրուզատին Մարիամին Գուլքարիին։ Որոյ յիշատակն օրհնու-
« թեամբ եղիցի և աղօթք սրբոյս Գրիգորի ի վերայ նոցա լիցի ամէն։
« Կառուցաւ սուրբ մատուռս ի Հայրապետութեան սրբոյ գահին Էջմի-
« ածնի Տեառն Ղուկասու ի մեզ թուականս * մեր ՌՄ. յաւուրս Փանահեա
« Իպրահիմ խանին։

* Գուցէ (թուականս)

Սոյն շերմին շատ ուխտաւորներ են գալիս, որոյ մուտքը տաճարի միջից է։ Շիրմի կողքին է և լուսաւորիչ անուանեալ մատուռը, որ գտնվում է տաճարի հարաւ արևելեան անկիւնում կից ուղիղ տաճարին, որոյ դռան վերայ ունի արձանագրութիւն մեծ տառերով այս օրինակ։

« Ի Թուին ՉԽԴ. զՏէր Ստեփաննոս Մետրոպալիտ Սիւնեաց որ է պատ-
« տաէֆրաէնտէս Հայոց մեծաց Որդածափառ իշխանին Տարսայիճին շինող
սուրբ եկեղեցւոյս յիշեցէք ի Քրիստոս։

Բայց այս Ս. Լուսաւորիչ եկեղեցին սորանից շատ առաջ շինուած էր Յով. եպիսկոպոսի ժամանակ ինչպէս կգրէ պատմութիւնն նոյն Օրբելեան ասելով « Բայց Երանելի և փառաւոր իշխանն Փիլիպպէ շինէ
« եկեղեցի մի գեղեցկաշէն մերձ հին եկեղեցւոյն ի Հարաւոյ կողմանէ,
« յանուն Ս. Լուսաւորչին Գրիգորի, և ինքն վախճանեալ դնի անդէն ի
« դրան՝ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և անունն գրեալ ի գըպ-
« րութեան կենաց։ Եւ այս լինէր յ297։ թուականին Հայոց։»

Դարձեալ՝ նոյն վերոյնշանակեալ արձանագրութեան ՉԽԴ, թուականը պէտք է համարել երրորդ անգամ շինութեան կամ գուցէ նորոգութեան թուական, որովհետև Փիլիպպէ իշխանի շինութիւնից յետոյ 493 Հայոց թուականին Իսմայէլական գօրագլուխների և այլոց հրոսակների կողմից աւերվում է վանքը և կողոպտվում ամբողջ հարստութիւնը։ միաբանութեան մի մասը ձորի մէջ փախուստ տալով ազատվում են, մնացեալները բոլորը սրոյ ճարակ են եղել, որ և այդ տեղ նոյն Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյնմէջ փայտեր դիզելով հրդեհում են, թողլով տաճարը անվնաս և նաև շարժական սիւնը, որի շարժողութիւնից վախենալով թողնում փախչում են։ ինչպէս կգրէ նոյն պատմիչը։ Իսկ զայլն ամենայն սրոյ ճարակ տային, և զեկե-
« ղեցին որ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին էր՝ լցին փայտիւ, և
« հուր հարեալ հրդեհեցին զգեղեցկայարմար շինուածն, և քանդեալ կոր-
« ծանեցին. կամեցան և զսքանչելի սիւնն կործանել և տեսեալ հրաշս ինչ
ոչ իշխեցին հպել։ Նմանապէս և ոչ մեծ եկեղեցին։ . . .
« Իսկ ապա Երանելի եպիսկոպոսն (495 Հայ. թ.) ձեռն ի գործ ածեալ
սկսանի շինութիւնն կործանեալ տաճարին սրբոյն Գրիգորի զոր յառաջ
« Փիլիպպէ իշխանն էր շինեալ։»

Այս մատռան առաջ արևմտեան կողմում՝ կամարակապ և երկար գաւիթն է, որի մէջ տեսանք Տաթևացւոյ շիրիմը։ շիրիմը տեղաւորած է սոյն գաւթի հիւսիս արևելեան անկիւնում, շիրմի հիւսիսային կողմը կից է մեծ տաճարի հարաւային պատը, և արևելեան կողմից՝ վերոյիշեալ Ս. Լուսաւորչի մատռան արևմտեան պատը, այսպիսով Տա-

թեւացեալ շերիմը, գաւթի երկարութեան և սորա խոր անկիւնում գտնուելու պատճառաւ ընկած է մութը՝ և անպաճուճ տեղ, բայց այժմ տեղւոյն վանահայրը՝ մտադիր է քանդել տալ գաւթի առաջ (արևմտեան կողմից) և թողնել բաց, որ թէ լուսաւոր կլինի թէ վայելուչ ձև կստանայ:

Գաւթի դարձեալ հարաւային կողմից դուրս գալով մտնում ենք փոքրիկ մի բակի մէջ, որոյ երկու բոլորտիքը, այսինքն արևելեան և հարաւային կողմերը շինութիւններ են ձորի վերայ, նախապէս մի վերը յիշած՝ վանահօր կայարանը վանքի ուներցած նախկին բազմաթիւ միաբանութեան սեղանատունը հացատունը, խոհանոցը, մառանը, անապարը և այլն. * այս շինութեանց առաջ կանգնեցրած է շարժական սիւն անուանեալ քարեայ սիւնը, որ նոյնպէս կանգնեցրած է նոյն շինող մեծ Յով. եպիսկոպոսն, « Ահա զայս իսկ աւարտեալ զամս մետասան ** կանգնէ և « մերձ եկեղեցւոյն՝ հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն . սրբոյ երրորդութեանն իմանր քարանց պատուաձեալ ի չափ երեսուն կանգնոյ . . . *** և այլն։

Այս սեան՝ շարժական սիւն են կոչում տես № 326 նկարը, և աւանդութեամբ պատմում են, որ եպիսկոպոսը՝ վարդապետական գաւազանի իշխանութիւնը այս սեան առաջն է տալիս աբեղային։

Սիւնը վերոյիշեալ շինութեանց մօտիկ է կանգնե-

---

* Ռոմանի-ասելով կրաւականանանք, որովհետև շատերին յայտնի է որ Ցաթևի վանքը 344, 495 Հայկ. թուականներում ինչ միաբանութիւն է ունեցել, որի նմանը ուրիշ ոչ մի վանքում, ոչ եղել է և ոչ տեսնվում է այս օր, այս մասին իբր հաստատութիւն աւելորդ չեմ համարեր պատմութիւնից հետևեալ կտորները այստեղ նշանակել համառօտ, (երևելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլ և պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ 500 եղբարց լի էր և ծովամատոյց փիլի-

սոփայիւք երաժշտական երգոց. ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաև արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատ . . 344, Հայ. թվ.) սորանից մի դար յետոյ 495 թուականին գրում է դարձեալ պատմութիւնը այսպէս (Եւ էր այնուհետև տեսանել զտունն այն իբրև զմայրաքաղաք բազմաժողով, քանզի և շինեալ կայր բազմութիւնն երգոց և ամբոխութիւն իբրև 1000 արանց, որոց մշտական աղօթքն բարձրացեալ էր առաջի Աստուծոյ. և կայր կանգուն յերկրէ յերկինս իբրև սիւն հրեղէն։)

** Մեծ տաճարի շինութեան համար է ասում, որի թուականը 344 է, Հայկականին։

*** Այս չափը չկարողացանք իմանալ թէ ինչ հաշուով երեսուն է գրած, որովհետև սեան բարձրութիւնը հաղիւ կլինի 9—10 ռուսական արշին։

ցրրած, և յիրաւի եթէ մէկը բարձրացնէնք նոյն մօտակայ շինութեանց կտուրը, և թողնենք՝ որ շարժէ, դուք կտեսնէք, որ ամբողջ սիւնը հիմքից սկսած զգալի կերպով շարժվում է, որոյ համար էլ Շարժական սիւն են անուանում, և որոյ գաղտնիքը ամենն այդ տեղ այցելողի համար մնացել է անիմանալի:

Սեան առաջ կան տապանաքարեր, որոնցից շատերը առանց արձանագրութեան և ոմանք դրժուարընթեռնելի են, միոնը՝ որ վերջին ժամանակների եպիսկոպոսների մէկին է պատկանում, վերան մի նկար կայ զգեստաւորեալ եպիսկոպոսի՝ ձեռին գաւազան բռնած, քարի վերայ գրած է այսպէս. «Աստ հանգչի բազմաշնաստ Սիմէօն արքեպիսկոպոսն Սիւնեաց հօտի, որ «էր բնիկ Տաթեւաւոր վախճանի 1858 ամի»:

Այս կողմի հին շինութիւնների — սեղանատան կտուրում առժամանակեայ զանգակատունն է, որ ունի երկու հնադարեան մեծ զանգակներ, նայելով այս զանգակների մեծութեան՝ կկարծուի, որ ահռելի ձայն պիտի ունենան, բայց ընդ հակառակը, շատ թոյլ ձայն է արձակում. այս վերագրում են այն բանին, որ Լանկթամուր այս տեղ աւերելու ժամանակ՝ սոյն զանգակները կրակի մէջ է ձգում, որ ձայները պակասին, և յիրաւի այրուածի սև բծի նշաններ են երևում զանգակի միջում, զանգակները ունին իրանց վերայ բարձրաքանդակ տառերով արձանագրութիւններ, մեծ զանգակի վերայ գրած է «Գթա Քրիստոս Աստուած ի Տէր Ստեփաննոս» յետոյ «Լսելի արա տէր զցնծութիւն և զուրախութիւն և ցնծասցէ ոսկերք իմ»: Օրա շրթունքի բոլորտիքը գրած է: «Տէր Ստեփան «Մետրոպոլիտ Սիւնեաց որ է Պրոտոֆրաէնտէս Ամենայն Հայոց ՁԾԴ»:

Իսկ միւս զանգակի վերայ գրած է «Լսելի արա ինձ «Տէր զձայն ցնծութեան և զուրախութեան» ՁԾԱ, իսկ ստորին մասում, այսինքն շրթունքի բոլորտիքը գրած է «զՏէր Ստեփան Սիւնեաց գահի կոչեայ ի փառսդ Հայրենի անեղ էին «ծննդեամբ ՁԾԱ»:

Այս այս կտուրի վերայ կանգնելիս նայում և զընում եմ, նախ՝ դէպի արևմտեան կողմ իմ եկած ճանապարհս, որ ձորը օձանման բարձրանում է ուղիղ Գազրոյլա լերան գագաթը, և զմայլվում եմ սիրուն տեսարանին, աջ կողմը Տաթև գիւղի բարձունքները, ձախ կողմը ներքև ուղղաձիգ՝ մեծ մասամբ մերկ ժայ-

մերկ ժայռերով, որոց մինչև վերայ այժմ մենք կանգ-
նել ենք վանքի շինութիւններով, ահա մեր ՝ա-
ռաջ, երևում է մեղուաբուծական պարտէզը խումբ
խումբ մեղրի փեթակներով, որոնք պատկանում են
Տաթևացւոց, աւելի առաջ մեր աչքերը բարձրաց-
նենք ահաւոր խոր ձորից, կտեսնենք Որոտնայ գե-
տի ձորը, դէպի վեր վեր ցցուած լեռնակոյտեր ի-
րենց մերկ քարային և երբեմն կանաչազարդ կողե-
րով, այդ լեռների վերայ մթնցած անտառներ, ձո-
րեր, փապարներ:

Տեսնում է՞ք Շ՝ահանդուխտի ժայռը (Հարսի ժայռ)
թուրքերը այսպէս են անուանում. սա իւր դժուար
կողերով, կարծես կտացած ձեղ է մտիկ անում,
ձեր ուշքն է գրաւում. յիշում և կամ կարդացած
կ՝լինիք անշուշտ գեղեցկութեամբ չքնաղ Շ՝ահան-
դուխտի պատմութիւնը, որ իշխան Վ՝արազ—
Տրդատի դուստրն էր, սա իւր բազմաթիւ սպասա-
ւորներով շրջապատուած անցնում էր այստեղից՝
և իւր հայկազուն իշխան՝ խոնայրի երկիրն էր
գնում հարսնանալու. օրիորդն գնում էր մի դժուար,
քարքարոտ ճանապարհով, ուր տեղ մի քարի փըր-

ռերով ձորն է, որի միջով բարձրաձայն գոռալով ան-
ցնում է մի առուակ, որ միքանի մեծ և փոքր ջըր-
վէժի նման գոյացած թափվում է փրփուր կտրած
ձիւնանման ջուրը. ջրվէժ չէ սա, այլ մերկ ժայռերից
սանդուղներ են, որ բնութիւնը ինքը կատարել է
այս տեղ, և պատճառ է դարձել անցնող առուա-
կին այդ տեսակ սոսկալի և ահռելի ձայներ հանե-
լուն, ուզում է՞ք ջուրը տեսնել, կտուրից կռանա-
լով տեսնել անհնար է, որովհետև այնքան բարձ-
րումն ենք, որ դէպի վայր նայելիս մարդու գլուխն
պտոյտ կգայ, և եթէ վայր ինկաւ, Ստուած հո-
գին լուսաւորէ պէտք է ասել. գնանք քիչ առաջ
դարձեալ կտուրի վերայով դէպի արևելեան կողմը
ջրի հոսանքի ուղղութեամբ. այս տեղ աւելի գուար-
ճալի, հիանալի, նաև սոսկալի տեսարան է ներկա-
յացնում, և միևնոյն ժամանակ մարդուս միտքը
լցվում է անցեալի պատմական յիշատակներով և
անցքերով. մեր տեսած առուակը ահա հասնում է
Որոտն գետին, գուցէ այդ տեղ հանդարտութիւն
գտնէ, առաջդ խորը ձորն է՝ մի փոքր առաջ մեր
տեսածից շատ աւելի խոր և ուղղաձիգ սեպաձև

թուած կար ահագին խորութեամբ, որ անդունդին էր նայում. ինչպէս ասում է պատմիչը (որ իբր անդունդս հայէր հանդէպ մեծի հայրապետանոցին Տաթևոյ) Խամայելացիները՝ արդէն օրիորդի չքնաղ գեղեցկութեան մասին տեղեակ լինելով եկել թաղնուել էին այստեղ և ուզում էին յափշտակել նորան:

Խամայելացիների յանկարծակի երևնալը Հ. Հանդուխտի ապաստարանների մէջ խառնակութիւն է յարուցանում, որով շատերը կոտորվում են, իսկ գեղեցիկն Հ. Հանդուխտ տեղեկանալով բանի եղելութիւնը—Խամայելացւոց գալու պատճառը. լաւ է համարում Քրիստոսի սիրուն այդ բարձրութիւնից գահավէժ լինելով մեռանել, քան թէ այդ այլազգի գազանաբարոյ անձանց ձեռքը ընկնել. յանձնելով իրեն Սուրբ Աստուածածնի և Սուրբ Երրորդութեան, խաչակնքում է երեսը և թռչում երիվարի հետ միասին դէպի ցածրը, ուր աներևոյթ զօրութեամբ անփնաս հասնում է երիվարով միասին խորը ձորի մէջ և այնտեղ էլ նուիրում է իւր անձը Քրիստոսի, և ուխտում մինչև մահը մնալ անդ. . . : Այդ պատմութիւնը գրում է Օրբէլեան՝ հիմնուելով Հ. Հանդուխտի ձեռքը գրուած մի նամակի վերայ (տես Օրպ. գլ. Լ.Ա. եր. 208):

Իսկ այս մեր կանգնած տեղից դէպի աջ եթէ դիտելու լինենք կտեսնենք մեր առաջ եղած ձորը, ձորի միւս կողմում, երևում է տափարակի վերայ տեղաւորուած փոքրիկ գիւղը Տաշ-պէ անունով, կանաչազարդ, և պտղատու ծառերով զարդարուած. Բայց վերջապէս այս սիրուն տեսարանը և ամէն մի տեղերը, որտեղ նկարվում են մեր առաջ, թողել մնալուն և նկարագրել շատ երկար կլինի. բաւականանանք համառօտ տեղեկութիւնով և գնանք դէպի մեր առաջ երևցած շինութիւնը դիտելու որ վանքիս հիւսիս արևելեան անկիւնում երկհարկանի, երկար պատշգամբաւոր, 4—5 մեծ և փոքր սենեակներից բաղկացած շինութիւն է, որ շինել է Ղ. Ալամեան վարդապետը, որը սա կառուցել է ուսումնարանի համար, և մինչև վերջի տարիներս գոյութիւն ունեցել է վանքի հաշուով, բայց այժմ. . . ինչպէս երևի աւերվորդ և անպէտք մի բան է համարվում ուսումնա-

բան պահելը, ուստի վերջ էզրուած այդ անպէտք հաստատութեանը, և ի՞նչ պատճառաւ՝ այդ լաւ չկարողացանք իմանալ. անշուշտ հնութեանը համար կըլլայ, կարծում ենք, որ պէտքէ նորոգուի և գարձեալ իւր նպատակին ծառայէ, որով մեծ բարիք և լոյս ուխտած կլլնի վանքը, իւր շուրջը գտնուած խաւար և խուլ տեղերի մանուկներին:

Սոյն շինութիւնը իւր առաջը փոքրիկ մի բակ ունի խոտերով և ծառերով ծածկուած, բակի երկու կողմերը առանց պատի, որի համար այդ բաց կողմերին էլ մօտենալ վտանգաւոր է, որովհետև գիրքը ուղղահայեաց իջնում է ուղղակի խորը ձորի մէջ, կարելի էր այստեղ պարտէզ շինել, ինչպէս էլ եղել է մի ժամանակ, բայց ջրի պակասութիւն է զգացուում. խմելու անգամ ջուրը հեռաւոր տեղից են բերում, թէև աղբիւր կայ կանգնեցրած դրան (դարպասի) մօտ բակի մէջում, բայց ջուրը շատ նուազ է գալիս և երբեմն էլ բոլորովին կտրվում է. երևի կամ ճանապարհը խանգարուած է և կամ ուրիշներն են օգտուում, մինչդեռ այդ ջուրը այնքան հեռաւոր տեղերից բերելը ո՞վ գիտէ՝ ի՞նչ դժուարութիւններ են կրել, և այսօր իբրև անտէր՝ անհոգ և անխնամ թողնուել է. ջուրը յիրաւի բերուել է շատ հեռու տեղից Զաքեաձորից, 381 հայ. թուին, Յակոբ եպիսկոպոսը առել է Սիւնեաց իշխան Փիլիպէի սեպհականութիւն եղած Զաքեաձորից Վ_ասրարակն անուն ջուրը, տալով 12000 դրամ և մի լուսաւոր գոհար (ջաւահիր). ջուրը շատ մեծ աշխատութիւնով (ինչպէս ինքն Յակոբ եպիսկոպոսը ասում է իւր վճռագրի մէջ) և մեծ ծախսով բերում է սարից Յաքուտ, ուր և այստեղ անկում է այգի, ձիթենու, թզենու, նռենու և զանազան տեսակ պտղատու ծառեր, նաև վարդենիներ և ծաղիկներ. ի վայելումն սուրբ հայրապետացն որ ի սուրբ աթոռս Հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացելոց Քրիստոսի, գլ. Խթ. երես 300, այժմ միթէ՞ այդքան դժուար պիտի համարել, և կամ սպասել մի գործունեայ, շինող, և ծաղկեցնող Յակոբ եպիսկոպոսի, որ այդ ջուրը Յաքուտից մինչև վանք բերէ, որ թէ տեղւոյն միաբանութիւնը և թէ եկեղեցիները ջուր ունենան խմելու, այն էլ մի այնպիսի մաքուր և առողջարար ջուր:



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

329 Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՄԻԱՏՈՒՆ. ՏԱՐԵՎՈՒՐ

326 ՏԱՐԵՎՈՒՆ ՇՈՒՐՋԱԿԱՆ ՍԻՐԵՀ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Художественная Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ՏԱԹԵՎԻ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԻՆԸ № 326·
Ս· ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԱՏՈՒՈՒԸ № 329·
ԶԳԵՍՏՆԵՐ ՏԱԹԵՎԻՑ № 351·

ՏԱԹԵՎԻԱՑԻՈՑ ԶԻՐԻՄԸ № 327·
ՏԱԹԵՎԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՔԸ № 332·
ՏԱԹԵՎԻԱՑԻՈՑ ՁԵՌԱՊԻՐԸ

ոյն աղբիւրի կողքին ինչպէս տեսանք և վաղօրոք ներս մտանք վանք, պարսպի դարպասի դուռն է կամարակապ դաղիքով ծածկուած, որի կատարի վերայ փոքրիկ, բայց գեղեցիկ, և վայելուչ կաթուղիկէիւ մի եկեղեցի կայ կանգնեցրած յանուն Ս· Աստուածածնի տես № 329 նկարը· կաթուղիկէի ծածկոցը շառաւիղաձև է նոյնպէս, ինչպէս մեծ տաճարինը· և կազմուած է մաքուր և մեծ սրբատաշ քարերով, ձևը և յատակագիծը նման Աշնոյ եկեղեցիներին· եկեղեցին մտնելու համար պէտք է բարձրանալ դարպասի կողքի շինութիւնների առաջ գըտնուած սանդուղքներով՝ շինութեանց և դարպասի կատարը, և մի նեղ անցքով մտնել եկեղեցին, ներսը անզարդ է, և տեղ տեղ քարերից խախտուած· սա շինել է Տաթևի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը 510 թուականին, Սմբատ թագաւորի օրով:

Այժմ մտնենք հռչակաւոր Տաթևի տաճարը· մենք տեսանք սորա փայտեայ դրան վերայի սիրուն փորագրութիւնը· ներքին կողմը ընդարձակ և բարձր է և իր կաթուղիկէիւ· խորին մի լռութիւն է տիրում: Այստեղ այցելուն ահիւ և երկիւղածութեամբ մտիկ է անում իւր չորս բոլորտիքը, կարծես մի բան է ուզում գտնել, որտեղում՝ ու չէ գտնում, կարծես այդ տեղ, սուրբ տաճարը մտնելիս պէտք է տեսնէր, սորա կառուցողին՝—Յովհաննէս առաջնորդին, որ թագաւորների, իշխանների, կաթուղիկոսների, եպիսկոպոսների, ստուար բազմութիւն հոգևորականների, նոյնպէս հաւատացեալ ջերմեռանդ ժողովրդի ներկայութեամբ տաճարը օծելիս և կամ՝ Սրհնեցէ՛ օծեցէ՛— ասելիս պիտի լինէր և ինքը տեսնէր, կամ այն հոգեշունչ միաբանութիւնը իրենց ջերմաջերմ աղօթքները դէպ առ Աստուած բարձրացնելիս լինէին· մտաբերում է Սիւնեաց պատմագրի այն անունները որը տաճարիս համար նուիրում է և անուանում է «Աստուածաշնակ լուսաձեմ եկեղեցի· Ագբէ-ր շնորհաշէն-ընդ պատն Սկսական Տարն· ասէ Հայրապետ· Ղեւ Հայրապետ· Ե այլ· որտեղում էք դուք և հարցնում ձեզ ու ձեզ, ո՞ւր են այն մշտամռունջ աղօթող միաբանութեան ծովացեալ բազմութիւնը, որ ասում էր նոյն պատմաբանը թէ՝ 500 և 1000 միաբանութիւնով

տական ենք իբրև եկեղեցւոյ հարաղատ՝ մի հզօր պաշտպանի, դու այն առածը միտդ բեր որ ասում է, «պոլոպոս ձայնն ասա ցուղ շարեր կ'ընկն» նոյնպէս էլ օտարի ասածին ու գրածին մի՛ միտ տուր:

Տեսնում ես ահա այն պատկերը, որը շերմի վերայ կախ արած է, տես Յոհան Որոտնեցին իւր առաջը հաւաքած աշակերտներին ուսուցանում է. իսկ այս կողմ Տաթեւացւոյ մայրը, որ ամլութեան համար աղօթում է Աստուծոյն, և ամենաբարձրեալն Աստուած իւր հրեշտակի միջոցաւ ուրախութիւն է յայտնում, որ և մի ժամանակից ծնում է Գրիգորին, և ընծայում Աստուծոյն. այսպէս են մեկնում այդ խորհրդաւոր նկարը:

Այս տեղ ահա այն տուփը, որը աւանդութեամբ ընդունած է թէ՝ Տաթեւացւոյ զգեստներն են պահվում, և երաշտութեան ժամանակ դուրս են բերում, որ անմիջապէս անձրևում է, ահա երջանկայիշատակ երանելոյն իւր ձեռագիր մի Աւետարանը, որը փոքրագիր է և մանրատառ մագաղաթեայ թղթի վերայ գեղեցիկ գրուած, իւրաքանչիւր երես երկու սիւնակի բաժանուած, որն որ մենք

նէբ՝ «ի՛ն հրեղէն յերկրէ յերկին» ք՝ «ի՛ն...» ո՛չ ջերմեռանդդ դու այցելու, իզուր դու մտքերդ կմաշեցնես, և ի զուր կգնան քո խուզարկութիւնը, քո հետաքրքրութիւնը չես կարող յագեցնել քո ցանկացածիդ համաձայն, մխիթարուիր և լեր զգաստ, նոցա բոլորի թողած կենդանի յիշատակներով ուրախութիւն ըզգայ, որոնք իբրև մի մի մահկանացուներ՝ մեզանից շատ ու շատ առաջ անցան գնացին, այն օրուանից ի վեր շատ դարեր են անցել, բայց նոցա ամեն մինի անունը և արած ու թողածը, քո սրտի ամենափափուկ մի տեղում տեղաւորցրած են—պատմութիւնը. կրկնում եմ բաւականացիր նորանով, բաւականացիր նոցա արածները տեսնելով, որն որ այժմ քո առաջդ են, քեզ ցոյց են տալիս նմանուել իրենց, ինչպէս դու այսօր պաշտում և յարգանք ես մատուցանում, այնպէս էլ կարողացիր նմանուելու, պաշտուելու և յարգուելու, որով կթողնես դու նոցա նման սուրբ և պաշտելի անուն դարեց ի դար:

Ահա քո աչ կողմդ այն պանծալի և սուրբ վարդապետի գերեզմանը, որ վաղուց կփափագէիր երկրպագութիւն մատուցանելու, որին մենք պար-

Սարգսեան գանձարանից։

լուսագրելով ի տես դնում ենք սոյն գրքիս Աւետարանի վերջում եղած ոտանաւորի ձեւով երկար յիշատակարանը՝ Տաթեւացունը չէ կարծեմ, որովհետեւ այս տեղ ձեռքը փոխվում է, գուցէ գրած լինին իւր աշակերտներից մին, այո՛, գրքի կազմի գեղեցկութիւնն ինձ հիացնում է, շատ սիրուն է, բայց չեմ կարծեր, որ այս տեղի գործ լինի, նոյնպէս Աւետարանի պահարանի մասին հաստատ չեմ կարող գիտենալ և ասել, որ այդքան նուրբ և հիանալի գործուածք, ինչպէս ասում են աւանդութեամբ՝ լինի դա՝ Տաթեւացւոյ քրոջ շինածը, որն որ ծիրանագոյն մետաքսեայ կտորի վերայ զարդարանք է տուած ասեղագործ նկարներով. այսպէս է ասում և Ղալաղեան սրբազանի ճանապարհորդութիւնը:

Ահա այն երկու սիւները, որոնք հաստ և գեղեցիկ կանգնած են տաճարիս մէջ հիւսիսային և հարաւային պատերի մօտ, որը տաճարիս շինութեանը հետ կանգնեցրած է Յով. եպիսկոպոսը ի խորհուրդ երկուց առաքելոց ինչպէս գրում է նոյն Սիսական վարդապետն Գր. Խն.

«Ոքք հաստահեղոյս խարսխոք և գեղեցկադիր և բարձրարերձ թաղակապոք պարաբարձեալ ունին զահագին թանձրութեան երկնաձեղուն քառակառակառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի, յորոց Նշխարացս և բազմութիւնք սրբոց Նշխարաց եդան ի ներքոյ սեանցս անդ գումարելոց, առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց եդան ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն»։

Ունի ընդարձակ բեմ և լայնանիստ կամարով, իւր մէջ ունենալով աւագ պատարագամատոյց սեղանը, որոյ երկու աջ ու ձախ կողմերում փոքրիկ սեղաններով. աւագ սեղանի խաչկալը թէև հասարակ փայտից կազմուած, բայց սիրուն շինութեամբ է կանգնեցրած, ինչպէս տես № 332 նկարը. ունի և տաճարը իւր զաղտնարանները ներքնայարկում և նաև պատերի միջով:

Մի ժամանակ նոյն Յակոբ եպիսկոպոսը, որ վերը տեսանք թէ Զաքեաձորից Ղուրն բերել էր Յաքուտ և այնտեղ այգիներ ու պարտէզներ էր շինել, նոյնը այստեղ Հայկ. 379, թուին տաճարի ամբողջ տեղերը՝ պատերը, առաստաղը և կամարները հիանալի պատկերներով զարդարում է ինչպէս ասում է Օրբելին:

«Այս Յակոբ եւ ածել նկարիչս Զաքարիա որ է պատկերագործ ի հեռա-

«ՈՐ աշխարհէ. և զլուսաճեմ յարկս աստուածարնակ տաճարիս բազում
«և անհուն ծախիւք ետ նկարել զրովանդակն ի վերուստ մինչ ի վայր. և
«զՓրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսլեամբ ետ նկարել հանդիպա-
«կշիռ աստուածագործ սեղանոյն՝ զբոլոր երկինն աւագ կամարին, և ի ներ-
«քոյ նորա շուրջ զսեղանովն զմարգարէական և զառաքելական և զհայ-
«րապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար նմանապէս և զբո-
«լորն համակ զարդարեաց այնքան, զի տեսողաց տեսարանքն շլանային
«և երբէք ոչ թուէր ի գեղոյ և յերանգոց յօրինեալ՝ այլ համայն կեն-
«դանիք՝ յորոց զարհուրեալք խուսափէին տեսողքն »։

Բայց այդ նկարները այսօր դուք չէք տեսնել, փչացել են, խոնաւութիւնից պատի ծեփերի հետ թափուել են, միայն շատ քիչ նշմարելի են լինում երբեմն փոքրիկ մասերը. ներքին կողմ տաճարիս այս է։

Ճմռանանք այս ևս յայտնելու, որ ժողովրդոց կանգնելու տեղում աջ և ձախ պատերի առաջ, կան երկու ընկուզեայ մեծ պահարաններ, որոց մէկի մէջ պահվում են հին, սիրուն ձեռագործ եկեղեցական զգեստներ, շուրջառ, փորուրար, ուրարներ, շապիկներ և այլն. միւս պահարանի մէջ գտնվում են զանազան սրբոց մասունքներ, որոնք արծաթեայ և ոսկեջրած խաչերի մէջ են տեղաւորցրած, թագեր, սաղաւարդներ, սկիհ, գաւազան և այլն. մասունքների մէջ գտնվում են կենաց փայտ Յակոբայ Տեառն եղբօր. աջ Յովհաննու Մկրտչի. աջ Ս. Օտեփանոսի. Թադէի առաքելոյն, և Սանդխտոյ կուսին. Գրիգոր զօրավարին և այլն թուով 40 ի չափ, մենք նկարում ենք մի մասը միայն բաւականալով տես № 351 նկարը։

Պանծալի և մեծ հայրապետանոցի—այն էլ Տաթևի մէջ դուք տեսնում էք ոչ այնքան հարուստ զարդարանք, որ մի ժամանակ ունեցել է աշխարհիս ամենաթանկագին զարդերից, գոհարներից, որ մինչև հընդկաստանից գալիս թափվում է եղել, չնայելով քանիցս անգամ ճոխ, և առատապէս զարդարուել է, բայց սոքա միշտ՝ պիղծ և յափշտակիչ ձեռքերի մատնուել է։



Худож.-Лит. Р. Шалбазянца въ Тифлисѣ.

327 ԴՐԻԶՈՐ ՏԱՔԵԼԱՑԻՈՑ ՇԻՐԻՄՐ ՏԱՔԵԼՈՒՄ



338 ԴԱԼԻՓ ԲԼԴԻ ՑԱՐԻ ԸՆԴ ՏԱՌԸ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Այն ամեն ունեցած կայքերը թէ շարժական և թէ անշարժ, որը 280 թուականներից սկսում է Տաթևը տիրանալ. թէև Տաթևի հաստատութիւնը սոյն թուականից էլ առաջ գոյութիւն ունեցել է, բայց փոքրիկ մի եկեղեցի լինելով (նայելով Օրպ. պատմածին) միաբանութիւն էլ համարեայ չէ ունեցել. նոյն ժամանակի հոգևորականութիւնը ժողովրդոց մէջ ապրում է եղել, գոնէ այսպէս յարմարաւոր են համարել. Սիւնեաց պատմիչը ասում է

«Արդ նախ և առաջն էր սահման եպիսկոպոսաց ընակել ի քաղաքս և
«ի շինամէջս, զի հովուին պարտ է ի մէջ հօտին լինել և ոչ յանկեան ուրեք»
«կայանալ. և հանապազ ներքին ակամբ վերահայեցիկ լինել իվերայ հօտին»
«զի մի խորամանկ խաբողն մտեալ անդր՝ գողասցի զոգի անմեղացն և ի բաց»
«տարեալ օձտեսցէ ի հօտէն. . . . այսպէս են եղել ապրելիս,

բայց յետոյ ինչպէս ասում է նոյն պատմիչը մի և նոյն տեղում թէ՝ «ըստ նպերտ բարուց ոմանց, որպէս թէ ճգնազ-
«գեացք և անապատասէրք գոլով, կուսութիւն աչաց և ականջաց խոկա-
«ցեալ պատշաճ համարեցան ընակիլ ի վանս, և ի պատշաճաւոր ժամու
«ելանել առ հօտն և խրատել»

Սոյն դիտաւորութեամբ և պատճառաւ էլ՝ դալիս ընակութիւն են հաստատում նոյն ժամանակի հոգևորականութիւնը, այս գեղեցիկ հարթավայր տեղում, ուր նախապէս Ս. Ներսէսի և Սահակի ժամանակից անշուք և կրաշաղաղ շինութեամբ եկեղեցի կայ եղել կառուցած. այս ժամանակիս ըստ կրսում է այս տեղ մշտնջենական միաբանութիւն, բայց ովքեր են եղել միաբան կամ վանահայր, սա ինքն Օրբելեանն էլ չէ իմանում, սորանից հետ սկսում է Դաւիթ եպիսկոպոսից, որ սա տեսնելով տեղւոյն քչութիւնը, ընդարձակում է, գնելով նաև ՀԱՅԿ. 288 թուին Սիւնեաց Վասակ իշխանի որդի Փիլիպպէ իշխանէն Աբեղ- և Բերդկանեբէ գիւղերը իւր ընդարձակ սահմաններով:

Սորանից յետոյ 293 թուին վանքի պայծառութեանը համար ինքը Փիլիպպէ իշխանը իւր սեպհական Տաթև գիւղը նուիրում է իւր բոլոր սահմաններով, որն որ մինչև օրս վայելում է վանքը:

Նաև նոյն Փիլիպպէ իշխանը այս թուականներում կառուցանում է մեր վերը յիշած Լուսաւորչի մատուռը և որոյ մարմինն էլ 297 թուին տեղափոխվում է այս տեղ:

Սոյն նուիրատուութիւնները և վանքի պայծա-

ռութիւնը տեսնելով ժամանակի իշխանները, հետզ-
հետէ նուիրում են իրենք ևս իւրեանց կալուածնե-
րից՝ ինչպիսին է Սիսական տոհմից Սահակի որդի
մեծ իշխանն Հրահատ ընծայում է իւր սեպհական
գիւղն Նորաշէնիկ Կովական գաւառում 293 թուին:

Փիլիպպէ իշխանի քոյր Քուպղեղուխտ իւր ծե-
րութեան ժամանակին իւր ունեցած կալուածքը
Բաղք գաւառում Մահ անուն շէնը նուիրում է
Սողոմոն եպիսկոպոսի ժամանակ:

Սողոմոն եպիսկոպոսից յետոյ Սիսական տան
Մեծրոպօլտութեան աթոռն է բարձրանում Յով.
եպիսկոպոսը, ձեռնադրուելով Գէորգ Կաթու-
ղիկոսից. սա ինքն Յով. տեսնելով եկեղեցւոյ նեղ
և խոնարհ ու հնացած լինելը, Սիւնեաց Աշոտ իշ-
խանի գահերեցութեամբ իշխանաց ժողով է կազ-
մում, որոյ հաճութեամբ և ձեռներեցութեամբ տա-
ճարի նոր շինութեան է ձեռնակիզում, և հիմքը
դնում են 344 Հայկ. թուին:

« Սկիզբն առնեն շինուածոյն և արկանեն հիմն յ344 թուին Հայոց,
« ի թագաւորութեան Սմբատայ Բագրատունոյ խոստովանողին որդւոյ Աշո-
« տայ որդւոյ Փիլիպպէի, ի կաթուղիկոսութեան Հայոց Տ. Գէորգայ Գառ-
« նեցւոյ, հրամանաւ և կամաք Աշոտայ, ձեռամբ Տ. Յովհաննէսի . . . .

Որ և 12 տարուց վերջացնում են ամբողջ շինու-
թիւնը, ուր այս օր տեսանելի է լինում այցելողին.
ժայռերի վերայ պարիսպ է հաստատում, որպէս զի
գետնի թանձրութիւնը հարթուի, վանքի ներքև
ծածուկ գաղտանոցն է շինում, բացի զանազան հար-
կաւոր շինութիւններից, շինում է սեղանատունը,
ամբարանոցը, գրատունը, և եկեղեցւոյ դրան առաջ
գաւիթի կամ իշխանաց դամբարանը, ինչպէս այժմ
տեսնում ենք, սորա տեղ նոր զանգակատունն են
կանգնեցնում. և այսպէս շինութիւնն աւարտելէ
յետոյ օծման հանդէսն է կատարում, որ մեծ խու-
ռն բազմութիւն է հաւաքվում, բացի վանքի ու-
նեցած 500 միաբանից գալիս են Հայոց Սմբատ
թագաւորը իշխաններով, Տէր Յովհաննէս կաթու-
ղիկոսը, Աղուանից Տէր Սիմէոն կաթուղիկոսը իւր
աշխարհային եպիսկոպոսներով և մեծամեծ իշխան-
ներով. նաև Դաւիթ Վասպուրականի (որ յետոյ
թագաւոր) իրեն եպիսկոպոսներով, իշխաններով
ու պայազատներով, Սիւնեաց Հայկազուն իշխան-
ները և այլ վանական հոգևորականներ ու աշխար-
հականներ, որ 8 օր ուրախ ուրախ Նաւակատիկ



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



328 ՏԱՔԵԱՆ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ

332 ՏԱՔԵԱՆ ՎԱՆՔԻ ԱՂԲԵՐԻՆ ՏԱՊԱՐԸ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

կատարելուց յետոյ վերադառնում են իւրաքանչիւրը իրենց տեղ։

Տաճարի օծման հանդէսի ժամանակ աւելի ընդարձակվում է վանքի կալուածները ինչպէս գրում է Օրբել. «Բայց Թագաւորն և իշխանքն Սիւնեաց տեսեալ զայնպիսի հանդէս և զայնքան չքնաղագոյն յօրինուած առաւելապէս սիրեն և պաշտեն զտեղին, և մեծ տրօք փարթամացուցանեն, և յոյժ ընդարձակեն զսահման տեղւոյն»։

Այսպէս շարունակաբար պայծառացել և հարստացել է վանքը թէ կալուածներով և թէ անդին զարդարանքներով, որոնք մի առ մի թուել և յիշել այս տեղ ահագին և մեծ պատմութիւն կկազմէ, այլ միայն համառօտելով այսքան բաւ կհամարենք, բացի վերոյիշեալ հողերից՝ և կալուածներն են հաստատուել մինչև վերջի Մեարապօլիտների ժամանակ, Ղարաբիլիսա, Աղբէանդ, Ինանի և Դարապիէրդ, Տաղև, Սոսրանց, Տանձապատ, Մալրաշ, Խաղանի, Խոտանան, Հալնոր, Շնհէր, Խոտ, Բերդիկ, Թաս, Կեց Լայն դիւղօրայք իրենց բոլոր ընդարձակ սահմաններով, որ և ի հարկէ անիշխանութեան ժամանակներում յափշտակուել էր բռնաւորների և զանազան շահախնդիր անձանց կողմանէ, որև նոյն Մարտիրոս արքեպիսկոպոսն Տէր Յակոբեան, որի գերեզմանը տեսանք տաճարի առաջ, սա 1820 Փրկչական թուին Թիֆլիզում Ընտեղչև և Երմօլով կուսակալներին խնդրամատոյց լինելով նոյն հողերի համար, որ և կրկին վերահաստատվում է իբր վանքի սեպհականութիւն. 1826 թուին Ռուս—Պարսկ. պատերազմի շփոթութիւնները պատահելիս Օրդուպատու իշխան Աբահայ խանն, Պարսկաց թագաժառանգի հրամանով գալիս աւերում է վանքը և միաբանից շատերին սպանում և շատերն էլ փախչում են. այս տեղ կալանաւորում են վանահօր Մարտիրոս արքեպիսկոպոս Մաղաքիա վարդապետի հետ և տանում Դավրէժ 15 ամիս բանտարկում։

Բայց վերջապէս Ռուսք յաղթելով մտնում են Դավրէժ, այդ տեղ ազատվում է Մարտիրոսը իւր ընկերի հետ, որ և Պասկևիչ իշխանի շնորհիւ վերադառնալով գալիս հասնում է իւր աթոռը Տաթև, 1827 Նոյեմբեր ամսուն. սորա վախճանումից յետոյվանքը անխնամութեան և անհոգատարութեան մէջ է ընկնում որով առիթ է տուել զանազան յափշտակ-

տակիչ անձանց իրենց սեպհականութիւն դարձնել նոյն վերոյիշեալ կալուածներից շատերը, որն որ այս օր նոյն ունեցած հարստութիւնից միմիայն մի անընշան մասը մնացել է, այն է Տարոն, Շէնո-հայք, Տանդարատ, Հալէնք, Խարբ, Աղէանք, Լաէն, Ղարսէլիսա, խոպ հող, Վէրս գիւղերում երբ։մն մասնաւոր հողեր այգիներ, նոյնպէս Մեղրում երկու կտոր հող։

Այդքան կալուածներ, զարդարանքներ և հարստութիւններ կորցնելուց յետոյ, չէ կորցրել այս օր Տաթևը իւր բարձր վսեմ անունը, ո՛չ միայն հայ ազգի, որ իրենց պարծանքն է համարվում, այլ և գիտնական աշխարհի առաջ, որոնց հետաքրքրում է հեռաւոր աշխարհներից գալ ու անձամբ տեսնել, հիասքանչ լինելով թ՝է նախնի հայ ճարտարապետութեան ունեցած արհեստին, թ՝է դիրքի և թէ շինութեան հաստատութեանը. որ 997 տարիների ընթացքում պատահած երկրաշարժերից, և պիղծ աւերիչ ձեռքերից դեռ կանգուն պահած է իրեն՝ Տաթևը. ուրեմն արժէ և հարկաւոր է, որ հայը միայն սրբատեղի և ուխտատեղի ճանաչելով չբաւականանայ, այլ կատարէ սորան 1000 ամեակը, որը կլրանայ 1344 հայկական թուին, երբ հոգ. բարձր իշխանութիւնը այժմեանից սորա մասին յայտարէ ի լուր համայն հայ ժողովրդեան. յոյս ունենք, որ շատեր իրենց ներկայութեամբ կկատարեն, շատեր որոնք հեռաւոր տեղեր են գտնվում, եթէ ոչ նոյն օրուայ կատարուելիք հանդէսին ներկայ լինելու, բայց ի հեռուստ զանազան միջոցներով կարող են իրենց յարգանքը յայտնել։

Դալով Տաթևի անուան մասին, թէ որտեղից է առաջացել. ոմանք ասում են թէ Ստաթէոս առաքեալի ժամանակ կառուցած է եղել, նախապէս փոքրիկ մի մատուռ, և յետոյ լեզուի աղաւանաք Ստաթէն տարել է Տաթև, ոմանք վերագրում են Տաթև գիւղի մօտ լինելուն, և ոմանք պատմում են աւանդութեամբ որպէս թէ՝ տաճարի կառուցանող ճարտարապետը մինչև կաթուղիկէի վերին ծայրը բարձրանալիս, շինութեան բարձրութիւնից սարսափում է և նորից վայր իջնել չկարողանալով. սկսում է կանչել Աստուածուն ասելով Աստուած ինձ պա՛յ ընե՞ որ թռչիմ այստեղից՝ պա՛յ ընե՞, պա՛յ ընե՞, այսինքն ինձ ընէր պա՛յ այդ տայ—թև բառից մինչի օրս էլ մնացել է. բայց որը՞ որքա՞ն ուղիղ է չգիտեմ։ այնքան գիտենք և տեսնում ենք, որ եկեղեցին օծուել է (յանուն երկուց գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի), բայց սորանից առաջ ի՞նչ անուն է կրել, նոյնպէս չգիտենք։



Худож.-Лит. Р. Шалбазянца въ Тифлисѣ.



ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Իսկ մենք Տաթևին վերջին հրաժեշտ տալով դուրս եկանք մեր երկար ճանապարհը շարունակելու, այստեղից հարկաւոր է ջորիներ վարձել, այլապէս դժուարութիւն պէտք է կրենք, որովհետև ինչպէս ասում են սորանից յետոյ մեր ճանապարհը շատ դժուարագնալի է լինելու, զառիվայր և զառիվեր՝ շատ վատ քարքարոտ ճանապարներ ունենալնուս պատճառաւ՝ և յիրաւի վատ ճանապարհների համար, ամենից յարմարաւորը ջորիով գնալն է, թէև սա յանդուգն կենդանի է, և երբեմն էլ պատահում է, որ եթէ խրտնի՝ էլ անհնարին է կանգնեցնել. էլ չէ մոռանում իւր վերայ հեծնողին ձեր շոյշոյելն ու փայփայելն ամենևին օգուտ չունի, փախչում է, վազում և պինդպինդ ցատկելով, եթէ վզումն էլ սանձ չունենայ այն ժամանակ ամենայն ինչ կատարեալ է, ինչպէս էլ պատահեցաւ մեզ:

Դուրս գալով վանքից շարունակենք մեր ճանապարհը. վանքի արևելեան կողմ գտնուած պարսպի տակից սկսում է մի տափարակ տեղ, ուր մի փոքր առաջ վանքի շինութեան կտուրից մեզ երևեցաւ մեղուի խումբ խումբ կողմներով—մեղուաբուծական պարտէզը, այս տափարակ տեղից դարձեալ առաջուանի պէս մի սարսափելի քարքարոտ պարսպաձև ու զառ ի վայր ճանապարհներում պէտք է իջնենք, որտեղ ցածրում, Որոտնի եզերքում՝ պարտիզների մէջ թաղուած երևում է կուսանաց մեծ անապատն, որի միայն կտուրները կարող էք տեսնել, քանի մօտենում էք անապատին, այնքան էլ նա հեռանում է ձեր աչքից, մինչև անտեսանելի լինելու չափ. որովհետև, մեր զառիվայր իջած տեղը որքան քարքարոտ՝ այնքան էլ ծածկուած է փոքրիկ մացառներով. մին էլ յանկարծ ճանապարհը կորմացառներով է և անապատի պարիսպն է գալիս ձեր առաջ:

Անապատի արևելեան կողմը անմիջապէս Որոտն գետն է, որ հանդարտ խայտալով անցնում գըտնում է, հարաւային կողմից էլ՝ Տաթևի մօտից անցնող մեզ ծանօթ առուակը, որը գալիս է այստեղ միանում է նոյն գետի հետ: Կուսանաց մեծ անապատի տեղը, դիրքը, շատ գեղեցիկ է և գուարճալի, արժէ այստեղ քիչ հանգիստ առնել, մանաւանդ անապատի բակի մէջ, ամբողջովին հովանաւորուած է սև թթենու մեծ և ահագին ծառերով:

Ընապատը շրջապատուած է հաստ և բարձր պարիսպով պարսպի մէջ շուրջ բոլորտիքը բազմաթիւ փոքրիկ սենեակներ են շինուած. պարձեալ պարսպի մէջ շինութեանց կողքին փողոցի նման մի ճանապարհ կայ, որի մի կողմը պարսպին կպած՝ երկար՝ բայց ցածր շինութիւններ են տեղաւորած, որ նոյնպէս՝ եթէ կարելի է համարել սենեակներ են, թերևս անապատի նախկին ունեցած կոյս միաբանների համար բնակատեղի. բայց շատ փոքր են սրանք այնպէս, որ 3—4 մարդ հազիւ կարող է միմիայն նստել, բոլորը միաձև և միաչափ, այսպէս բոլոր սենեակների թիւը 130ից աւել է: Դակի մէջտեղ մի եկեղեցի կայ յանուն Ս. Աստուածածնի. ընդարձակ է և լայնանիստ, 4 առանձնակի սիներով հաստատուած, առանց կաթուղիկէի, առաջը փոքրիկ մի գաւիթով, այստեղ առաջ կուսանաց մեծ անապատ է եղել, իսկ այն սենեակները, որոնք մենք տեսանք, չկարողացայ իմանալ, թէ հին ժամանակից է շինուած թէ վերջի ժամանակի գործ է. թէև կայ այստեղ վանահայր մի վարդապետ, բայց մեր հետաքրքրութեան բաւականութիւն չկարողացաւ տալ. ինքն էլ ոչինչ տեղեկութիւն չունենալով:

Այստեղ տարուայ մէջ Աստուածածնայ տօնին ուխտաւորների մեծ բազմութիւն է լինում. գալիս են նոյնպէս և շատ հիւանդներ, որոնք մնում են այստեղ մօտակայ սատանի կամուրջի վերայ բղխող աղբիւրից օգտուելու. մենք էլ գնանք բնութեան հրաշալիքներից մինը—Սատանի կամուրջը տեսնելու:

Ընապատի հիւսիսային կողմ Որոտանայ գետի հոսանքի հակառակ ուղղութեան գնում ենք մի սարսափելի գառ ի վայր ու վեր նեղ ուղիով. մեր ձախ թևի վերայ Տաթևի սարն է բարձրացած, ուղղաձիգ իւր քարաժայռութեամբ և դուրս ցցուած կողերով, և ծռուել է ուղղակի գետի վրայ, կարծես ուզում է տեղից պոկ գալ և փակել խեղճ Որոտանի նեղ ու անձուկ ճանապարհը, որը առանց նրան էլ աջ ու ձախ կողմից իրեն սղմող ժայռերի հետ կռուելով գնում է, որոնց չկարողանալով յաղթել՝ քանդել է փափուկ հաղերը, որով անցաւորականի համար ճանապարհ էլ չէ թողել, եթէ թողած տեղ էլ կայ, այն

էլ այնքան նեղ է, որ մի փոքր անզգուշութիւնից, կորած է մարդ. երևակայեցէք եթէ այդպիսի նեղան-ձուկ ճանապարհում՝ լինի բարձր դուրս ցցուած մի քար, որոյ վրայից պէտք է անցկենալ, և ձեր ձախ կողքում գտնուած՝ պատի նման բարձրացած հո-ղերից էլ, դուրս ցցուած լինի կոշտ մի մացառ՝ եր-կարացրած մինչև ճանապարհը փակելու չափ, ինչ պէտք է անել, և այդ էլ պատահում է յանկարծա-կի, որովհետև ճանապարհը ոլոր մոլոր պտոյտնե-րով է բարձրանում կամ իջնում, այդ տեղ յետի-ոտս գնալ աւելի յարմար է քան ձիով կամ ջորի-ով, որովհետև ձեզ բռնում է յանկարծ ճանապահի վերայ դուրս ցցուած կոշտ մացառը, այդ տեղ ան-պիտան կենդանին ժամանակ չէ թողնում ձեզ այդ վտանգաւոր պատահարից անվնաս անցկենալու. այս տեղ կամ ուղղակի ընկնելու էք ձորը՝ և կամ մի կերպ ապաստանելով այդ մացառին ձեր շորերը լաւ պատառոտելով մինչ անցնէք, այպէս էլ մեզ հետ պատահեց։

Այս յանկարծակի պատահմունքը և ճանապար-հի վատութիւնը յիշեցնում է ինձ անցեալ մի պա-տահական դէպք, որը պատահեցաւ Վայոց ձո-րում ճանապարհորդութեանս ժամանակ, Աղքենդի և Քարագլուխ ասուած գիւղերի ճանապարհում, որ տեղ կար մի սարսափելի խորը ձոր և սոքա բարձ-րում գտնվում էր մի նեղ ճանապարհ այն էլ յե-տիոտի համար միայն. այդ տեղ մենք բարեբաղդա-բար վայր էինք իջել ձիուց, մի տեղ յանկարծ մեր ձին սայթագվում է ու գլորվում ուղիղ ձորի յա-տակը, ուր մեր աչաց առաջ անհետացաւ, տանելով իւր վերայ բարձաց և մեր նկարչական գործերն. այսպիսի մի դժբաղդութիւն այս տեղ էլ կրկնու-թիւն չանելու համար վայր իջանք մենք ջորուց և գնում ենք յետիոտս, փառք տալով, որ միայն շո-րերի պատառուածքներով ազատուեցանք. ընկեր-ներս էլ ինձ հետ համաձայնում են այս դէպքում, գոնէ մինչև այդ վատ տեղը անցնելը։

Ասել ենք արդէն սատանի կամուրջ ասուած տեղը և հարցնում ենք ուղեցոյցին թէ ո՞ր է կա-մուրջը, ասում է՝ ահա այս է. կասկածում եմ և կարծում, որ սա էլ ինձ՝ կամ շորերիս խայտառա-կութեան վերայ ծիծաղում է, ինչպէս անում էին

ընկերներս, ես յանդիմանում եմ, բայց նա նորից կրկնում է և ցոյց տալիս գետը ու ասում՝ ահա գետը աղա՛, որ գալիս է մեր այս կանգնած տեղի տակով անցնում է, մնում եմ շուարած և շըփոթուած։

Սիրելի ընթերցող, դուք էլ ինձ հետ կշփոթուէիք եթէ եղել էք այն տեղ և կամ պատահիք, որովհետև ոչ ինչ չէք տեսնում և ոչ ինչ էլ չպիտի հասկանանք կարծեմ։

Ուզում էք մանրամասն քննել, տեղեկանալ թէ ի՞նչ գաղտնիք է այս, որ բնութիւնը ձեզ ցոյց է տալիս, թէև օրը տարաժամ է արեգակը արդէն կամենում է մայր մտնել։ բայց ինչ էլ որ լինի պէտք է տեղեկանալ ու նկարել, որովհետև խոստացել ենք պատկառելի գիտական ծերունուն—հայր Ալիշանին ուղարկելու, և քանի որ եկել ենք այս տեղ, նա մանաւանդ Ճանապարհին արիւն քրտինքի մէջ թաթախուած համարեայ նահատակուելենք։

Ճանապարհին ձեր կրած նեղութիւնը սիրով տանում էիք, պատճառ, որ սատանի կամուրջը պէտք է տեսնէիք, բայց այժմ ի՞նչ էք տեսնում, ոչ ինչ, և ոչ ինչից ոչինչ, ահա ձեր գտնուած այս մեծ հրապարակը, որ դեղին, կարմիր և մոխրագոյն գոյներով կաւաին քարացած հողից մի հրապարակ է և որի վերայ մինչև անգամ տեսնում էք՝ ահագին ծառ էլ է բուսած։ հենց սա ինքն է սատանի կամուրջը, եթէ սա սատանայական բան չէ՞ ի՞նչ է հապա։ երևի այս պատճառաւ էլ սատանի կամուրջ է անուանվում։ գնում էք այդ մեծ հրապարակից քիչ առաջ դէպի այն կողմ, ուր գոռգոռում է գետը, կարելի է նա ձեզ մի տեղեկութիւն տայ, բայց տեսնում էք, որ սա, մի ահագին կռիւ է մղում իւր երկու կողմ պատած անյաղթելի ժայռերի հետ, գոռում է, գոչում, սարսափելի և ականջ խլացուցիչ աղաղակներ է բարձրացնում, ճանապարհ է պահանջում անցկենալու, որովհետև շատ նեղ է գալիս իրան, ալիքներ և սոցա մէջ ահագին մեծութեամբ ժայռի բեկորներ խառնուել են իրար, տեսնում էք ժայռերը երբեմն յաղթուելով ալիքների յորձանքից, կարծում էք թէ խեղդուեցան, կորան, բայց ո՛չ, մին էլ յանկարծ դուրս են ցցվում, այսպէս ահագին և մեծ կռիւով վերջապէս Որոտն գե-

տը մի կերպ ճանապարհ է գտնում և ձեր աչքից անյայտանում է, ուր, չէք տեսնում, չէք իմանում. միայն սատանան գիտէ, ձեր կանգնած զանգուածի տակը կորչում է, և մի քանի հարիւր քայլ դուք այդ զանգուածի վերայով գնալուց յետոյ տեսնում էք նոյն գետը, որ այստեղ խորը փոսի մէջ սեւացած հանդարտ կանգնած է մի մասը, որ և շատ դանդաղութեամբ է առաջ գնում։

Գետը, գալիս է հիւսիսային կողմից, նեղ, բայց ահագին խորը ձորի միջով, և գնում է դէպի հարաւ նոյնպէս ձորի միջով, մինչև անապատի և Տարթևի արևելեան կողմը, յետոյ դառնալով դէպի արևելք միշտ ձորերի միջով մտնում է Ֆալիձոր։

Ելյժմ մենք, որ այս ընդարձակ զանգուածի վերայ կանգնել ենք, պետի անուանենք սատանի կամուրջ, ինչպէս ընդունուել է, ի հարկէ մենք չենք կարող փոխել և ուրիշ անուն տալ։

Այս կամուրջի հիւսիսային կողմը ուր տեղից գետը գալիս է՝ շատ նեղէ, ձորի բերանն էլ շատ նեղ լինելու պատճառաւ. երբ դուք կանգնած էք լինում կամուրջի այս նեղ բերանում, ձեր դէմը գտնուած նոյն որոտող գետի մակերևոյթն էլ ձեր հորիզոնական բարձրութիւնն ունի, և երբ անյայտանում է ձեր աչքից, և մտնում է այն զանգուածի տակը, ուր դուք կանգնել էք. այս ծայրից մինչև կամուրջի հարաւային ծայր գնալը, որը չափում էր երեք հարիւր քայլից աւել, լայնանում է այս տեղ կամուրջը և ձորը. կամուրջի այս ծայրում կանգնելիս դուք տեսնում էք ջուրը, որ շատ խորն է ընկած 10 սաժէն աւելի խորութեամբ, այս տեղ զանգուածը հաստանում է, և այս աւելի պարզ հասկանալու և տեսնելու համար, սորա հանդիպակաց կողմերը մի կերպ աշխատանք իջնել ու տեսնել. թէև դժուար է և վտանգաւոր, բայց կարելի է պարանների օգնութեամբ վայր իջնել, գոնէ մինչև կէս խորութիւնը։

Ահա դուք այս տեղ ուրիշ ոչ մի բան չէք տեսնում, միայն մի և նոյն գոյներով մի զանգուածի (ինչ որ վերը յայտնեցինք) լե-լե լե-լե (բիւրեղանման) կախ ընկած են «պալակիտներ» զանազան ձևի և մեծութեան, որոնք կազմուել են ջրից մի քանի արշին բարձր՝ կրկնակի աստիճաններով կամարներ

կապելով, այնպէս՝ որ ամենաներքին կամարը բոլորովին կանաչ գոյն է ստացել և շատ մութն է ընկել, բայց և այնպէս կախ ընկած լիլէները երևում են. սորա վերայ ուրիշ մի կամար՝ աւելի պարզ նշմարելի. մինն էլ սորա վերայ և աւելի պարզ, իսկ ամենավերինը բոլորովին պարզ և հասկանալի, որ նոյն զանգուածներիցն է գոյացել որտեղ մենք մանէինք գալիս՝ ուրիշ ոչինչ. այստեղ ջրի եկած ճանապարհը երևում է այնպէս, որ կարծես՝ մեր կանգնած տեղի հանդէպը գտնուած սարի տակով է գալիս, և շատ էլ պարզ երևում է, որ արագընթաց է գալիս և յետոյ մեր կանգնած տեղի առաջ, այսինքն կամուրջից դուրս հանդարտվում է խոր խորութեան և աւելի լայնութեան պատճառաւ. մենք էլ այստեղից նկարենք ի տես հետաքրքիրների տես № 333 նկարը:

Բարձրանանք վերև և մեր կողմի եղաձորի ուղղութեան գնանք առաջ որ մեր ընկերները զուարճանում են մի հանքային ջրի դուրս ցայթեցնող սրղպրջակների հետ. այդ տեղ հանքային ջուր է բղխում, և շատ առողջարար ջուր են պատմում. որոյ հաժար Տաթևի վանահայրը մի փոքրիկ աւազան է շինել մի արշինաչափ խորութեամբ. ասացինք՝ որ շատ առողջարար ջուր է, բացի շատերի վկայելուց տեսանք այդ տեղ Շուշուց եկած մի հիւանդ պարոնի, մեր ընկերներից մէկի էլ ազգականը, որի ամբողջ մարմինը նա մանաւանդ ոտները չափազանց ուռած է լինում, և բժիշկներից օգնութիւն չտեսնելով, ուրիշների խորհրդով գալիս է այս տեղ. ահա, ասում է նոյն պարոնը, «ես, որ գիտէք, չէի կարող մանգալ, առաջին և երկրորդ անգամ անապատից մինչև այս տեղ գալս ու գնալս ձիով էի երթևեկում, բայց այս ջուրը մտնելուց 5 երրորդ օրը, արդէն ես ոտով կամաց կամաց գնում գալիս եմ; և տեսէք (ցոյց տալով ոտները) ոչ մի ուռուցք չէք տեսնել, այս 8 երրորդ օրն է, և մի երկու օր էս ուզում եմ մտնել էլ բաւական է, որովհետև զգում եմ, որ շատ լաւ եմ»:

Այս աւազանից մի քայլ անցնենք, և ահա մի ուրիշ հանքային աղբիւր, առաջինի համար ասում էին, որ երկաթաջուր է, իսկ այս երկրորդը զելզերեան ջրի համ ունի, և լաւ էլ խմվում է, այս էլ առաջուանի նման ապարդիւնս գնում թափվում է, նոյն զանգուած հրապարակի վերայ. սոցա ուղղութեամբ մի քանի քայլ էս գնանք, ահա ձեզ մի ուրիշը, որ սա նոցանից աւելի քիչ բարձրից է կաթկաթում. և մի փոքր առաջ էս, և ահա ցոյց են տալիս հին

աւազանը. ոմանք ասում են Ճգնաւորի բաղնիս է. թէև սորա տեղը շատ դժուար է. բայց գնանք առաջ, կտեսնենք, որ այս տեղ էլ կայ բղխող հանքային ջուր. գուցէ սա վերևից է գոյանում այս տեղ, որը չենք կարող հասնել՝ անմատչելի է տեղը:

Վերջապէս սորանք մեղ չէ հետաքրքրում, որովհետև հանքաբան չենք, այդ գնուութիւնները թողնենք նոցա, որոնք մասնագետներ են, տեսանք սատանի կամուրջը և տեղեկացանք սորա մասին համառօտապէս, ուստի ընկնենք ճանապարհ, արդէն մթնում է, և դեռ ունենք ևս անտառօտ ճանապարհ:

Դեռ չհեռացած զարմացմամբ կրկին անգամ աչք էք ածում, այդ բնութեան հրաշալիքին, որ ուրիշները սատանայական են անուանում. այդ տեղ եթէ չեմ սխալվում պարզ երևում է, որ այն մեր տեսած մի քանի հանքային ջրերը ո՛ գիտէ ո՞ր ժամանակից սկսած և որքան հին դարերից գոյութիւն ունենալով իրենց բղխումը և իրենց բղխած տեղից սկսած զանգուածներ են կազմել, միշտ բարդուելով գոյացրել է այդ ընդարձակ տարածութիւնը մինչև հասել գետի միս եզերքի հետ ու միաւորուել, որ այսօր ազատ համարձակ անց ենք կենում իբրև հաստատուն ապառաժի վերայ, և այնքան հաստատուն, որ դորանցից գոյացած զանգուածները, որոնք լիւլէ լիւլէ կախ են ընկած, եթէ ուզենաք պոկել հաստատացածներից որ՝ անկարելի է, այլ բարակ ճիպոտների նմանները միայն քարի հարուածներով կարողանում էք պոկել. բայց ո՞րն է այդ ջրերի մէջից այն զանգուածը գոյացնողը, այդ չգիտեմ:

Այս էլ չմոռանանք ասել, որ նախ քան այդ կամուրջի այս տեղ գոյանալը թերևս գետի հոսանքը այստեղ ջրվէժի նման եղած լիներ, որովհետև ինչպէս տեսանք, գետը բարձր էր այն կողմ ուր կամուրջը նեղ էր, և ջուրը գալիս այս զանգուածների տակը թափվում և ոչթէ քերում գնում, և կամուրջի միս ծայրը, ուր տեղ ջուրը խորն էր, այնտեղի զանգուածը մենք ինչպէս տեսանք՝ մօտ 20 արշին հաստութիւն—բարձրութիւն ունէր, և այդ տեղից ջուրը արագ՝ մեծ հոսանքով չէր գնում, ուրեմն ենթադրած, որ այս տեղ ջրվէժի նման էր վաղ ժամանակ, ուստի և ջուրը չէր կարող արգելք լինէր նոյն զանգուածների գոյացման, քանի որ լինելով ջրից միշտ ազատ, կարողացել է իրար վերայ բարդուելով զանգուածներ շինել, որ մինչև հասել է գիտի միս եզերքը, և կազմել է այժմ մեր տեսած սատանայական կամուրջը— բնութեան հրաշալիքը:



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ՀՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

սատանի կամուրջից բաժանուելով բարձրանում ենք սորա հարաւ—արևելեան կողմի դժուարագնաց, լանջիվեր մի ճանապարհով, քանի բարձրանում ենք, այնքան աւելի հիանալի տեսարան է բացվում մեր առաջ, ցածրից մեղ ծանօթ Որոտան գետը, որ դարձեալ նեղանցուկ ճանապարհներով իրան աջ ու ձախ խրում անցնում ու գնում է, մեր աջ կողմի վերայ եղած ձորի կողքին ապառաժ ժայռը, ուղղակի իջնում է գետը. ամենևին չցոյց տալով ճանապարհորդի համար ճանապարհ, մինչդեռ փոքր ինչ առաջ սատանի կամուրջ դալու ժամանակ այդ տեղից էինք անցել:

Հեռուն ցածրը Ս. Աստուածածնայ անապատն է տեղաւորած գետի ափին խիտ այգիով պատած, որ ծածկել է ամբողջ վանքը: տես № 334 նկարը Հալիձորի:

Մտնում ենք Սոխկալ—Ղոնդան անտառը, և արագ քշում ենք մեր կենդանիներն. այլ ևս չենք տեսնում ոչ անապատը ոչ սատանի կամուրջը և ոչ Տաթևը, բայց միշտ մեր առաջն են և մեր յիշողութիւնից երբէք չի դուրս գալ, խօսակցելով մեր ընկերների հետ մեր տեսածների, վանքի գեղեցկութեան, դիրքի, և ունեցած ամրութեան, նորոգ շինութեան մասին ևայլն. շտապում ենք առաջ գնալ և անտառից դուրս գալով մտնում ենք Հալիձոր գիւղը, որ տեղաւորած է զառի վայր դիրքի վերայ, բոլորը հայ բնակիչներով. սակայն չկարողացանք մնալ այդ տեղ, օրուայ մթութիւնը շտապեցնում էր մեզ մի ժամ առաջ հասնել Հնէր գիւղը:

Մեր ճանապարհի մասին ես չեմ կարող մի բան ասել, որովհետև մութն էր, մեր վարժ ձիաներին էինք թողել, որ տանեն մեզ ուր որ ուզենան, միայն այսքանը յիշում եմ, որ միշտ բարձրանում էինք ապառաժների վերայից, որ տեղացիք կապան են ասում:

Մեր ձիաների ոտները հողի չէին դիպչում, այլ միշտ ժայռերի՝ այն էլ սանդղաձև, բարձրացիր ու հա բարձրացիր կարծես թէ վերջ չունի. և յիրաւի էլ վերջ չունի. մինչև հասնում ենք գիւղի մէջ. գիւղի փողոցներն էլ այն դրութեանն են ինչ որ ճանապարհին էր, այս տեղ աւելանում էր և փողոցների չափից դուրս նեղ լինելը:

Գիշերում ենք այս տեղ. և առաւօտ վաղ լուսադէմին բաժանվում ենք մեր ընկերներից, նորանք գնում են Շուշի. իսկ ես մնում եմ գիւղում գըտնուած Հաբանց անապատը տեսնելու, տեղւոյն քահանայի առաջնորդութեամբ մտնում եմ անապատը, քայքայուած, փլփլուած մի շինութիւն, բաղմաթիւ սենեակների փլատակ հիմքեր, որ կառուցած են սարսափելի խորը ձորի վերայ. մտնենք անապատի մատուռը, որի առաջ փոքրիկ մի գաւիթ ունի. սորանից մտնում է եկեղեցին, եկեղեցւոյ դրան վերայ կիսաբոլոր մի քար ունի դրած, և ցոյց են տալիս տեղացիք՝ ասելով, որ այս տեղ արձանագրութիւն կայ եղել, բայց Լանկթամուրը եկեղեցին այրել է և սա էլ հետը փչացել. դարձեալ Լանկթամուր, ուր գնաս այս անիծածի անունն ես լսում, գուցէ և այս մատուռը տեսած էլ չլինի այդ, բայց ժողովուրդը բոլոր պատահածը վերագրում է նորա չարագործութեանց:

Այն մատռան մէջ մենք ոչինչ չենք գտնիլ, ոչ արձանագրութիւն և ոչ ինչ. այլ միայն չորս կողմի քարեայ պատերը և քարակապ տանիքը, սեղանի կամարը:

Շնհէր՝ հին անունը Շինուհայր, բաղկացած է 200 ից աւելի հայ բնակիչներով, տեղւոյն դիրքը ինչպէս ասացինք՝ խիստ զառիվայր լինելուն, կարծես տները վերևից վայր միմիեանց վերայ պիտի ընկնեն, գիւղի բարձրում պարսպանման քարաժայռ է, մենք այն կողմ գործ չունենք, ուստի իջնենք գիւղից ցածր, խիստ նեղ և մեր եկած ճանապարհից աւելի վատթար՝ այն էլ զառիվայր ճանապարհով գետի եզերքը, որ անցնելու ենք դիմաց, Շընհէր գիւղի դիմացը երևացած բարձր սարակատարում տեղաւորած՝ 26 տուն հայ բնակիչներով բաղկացած Եէյուլու-մէ գիւղը:

Ով որ այս կողմերը ճանապարհորդել է, նա միայն կարող է հաւատալ, որ մեր նախնիք մի մի գերբնական ոյժերով են օժտուած եղել, որ այնպիսի քաջագործութիւններ կարողացել են կատարել այս տեսակ դժուար տեղերում, դիւրաշարժ ջորին անգամ չի կարողանում քայլերը տեղափոխել, և ինչ ճանապարներով էին ել և էջ անում այս սարերում մարդիկ, ակամայ հարցնում էք դուք ձեզ ու ձեզ, չիցէ՞ այն անիծուած Լանկթամուրը ճանապարհներն էլ այրել քարուքանդ է արել:

Այս տեղ լայնացած ու ահռելի Որոտն գետը սարսափով անցնելից յետոյ էլ դուք ճանապարհ մի որոնէք Նրիցաթումբ գիւղը բարձրանալու, գնացէք ինչպէս կարող էք, թէ կենդանին և թէ դուք թաթախվում էք արիւն քրտինքի մէջ մինչև սարի կատարը, ուր փոքրիկ գիւղում մի քանի ժամ ակամայ դադար էք առնում:

Այս տեղ էլ չկայ նշանաւոր մի բան հնութեան վերաբերեալ, բայի հնագարեան օրօրոցաձև մի եկեղեցուց, որը իւր հաստատութեան մասին առանց տեղեկութիւն տալու լուռ կանգնած է ձեր դէմը իւր աւեր դրութեամբ, շարունակենք մեր ճանապարհը սորա հարաւային կողմով:

Գնում ենք անտառի միջով, երբեմն փոքրիկ արօտատեղի և էլի անտառ, վերջապէս դուրս գալով մի բացօթեայ տեղ, որ կրկին մեր առաջ երևում է ահագին անտառոտ մի լեռ, որտեղից մենք գնալու ենք Ղաբանի հալեձորը—Ռաղք գաւառը:

Բայց մեր կենդանուն վերայ այլ ևս կարողութիւն չկայ ճանապարհը շարունակելու, արևն էլ վաղուց է մայր մտել և մենք ճարահատեալ այս հովտում մնալու ենք. բայց հարցն այն տեղ է թէ ո՞րտեղ... և ահա մեր առաջ երևեցան թուրք վրանաբնակներ ստիպուած պէտք է գիշերել այս տեղ, գնում ենք դէպի վառվող խարոյկների կողմը, որոնք Հաջլար գիւղի թուրքերն են, որ ամառուայ եղանակին գալիս են այս տեղ իրենց խաշնարով՝ լեռնային մաքուր օդը վայելելու. մեր ժամանակ այցելութիւնը զարմացրեց սոցա շատերին. և շրջապատեցին ինձ՝ այր, կին, ծեր, երիտասարդ, աղջիկ, տկլոր երեխաներք, և այլն, և երբ տեղեկացան, որ իրենց հետ եմ մնալու առաջնորդեցին ինձ մի բէկի վրան և իրենք ներողութիւն խնդրեցին գնալու, որովհետև շախաէ վախշէի վերջին գիշերն էր իրենց կրօնական հանդէսը կատարելու, և մի երկու ժամից ինձ էլ հրաւիրեցին ներկայ լինելու, իմամի օրհնութիւնը ստանալու և փող բաշխելու:

Առաւօտ վաղ այս տեղից ճանապարհ ընկանք առանց Ղ-Ն-ի շարունակելով մեր ճանապարհը մի քանի հայաբնակ խեղճ ողորմելի գիւղերից—ներքին և վերին Խոտանան և այլն. մի քանի գիւղերից անցնելով հասնում ենք Առաջաձոր գիւղը, ուր բոլորն հայ բնակիչներ են մօտ 140 տուն, նոյն գիւղի կալուածատէր Մանուչար բէկի տունը փոքր ինչ հանգստանալու:

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ: * ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Ա՛ռաջաւոր գիւղից երբ դուրս ենք գալիս, մի փոքր գնալուց յետոյ հանդիպում ենք Պղնձահանքի գործարաններին. այս կողմերը ինչպէս անուանում են Մարդաններ որ մի հանքային սար է, և բաժանուած է մի քանի գործարանատէրերի. սարը անուանուում է մի քանի անուններով, ինչպէս են Կա-ուրդէ հող, Ղարդէ ընկերութեան հող, Հալիձորում Մելիք-Փարսադաններէ հող:

Պղնձահանքերը թուով հինգ են, որոնցից երկուսը պատկանում են Հայերին, երկուսը Յոյներին, իսկ մէկը թուրք ընկերութեան, որի մի անդամը հայ է Շուշեցի Մելիք Ղարագեոզեան. նոյն սարի բարձրում գտնուած հանքը բանեցնում է Յոյն Նօրկի անուն մի անձ, որի գործաւորների մեծ մասը Յոյն գաղթականներ լինելուն, այդ տեղ իրենց բնակութեան տեղն են շինել և կառուցել են տուել նաև 20 տարուց ի վեր է, Ռիւզանդական ձևի մի նոր եկեղեցի իբր իրենց աղօթատեղի. բնակութեան տեղին անուանում են Բաղէնդ:

Այս սարի հարաւային կողմն է ընկնում Ղադարի հող անուանեալ հանքը, որը բանեցնում է Ղադարի պղնձահանքի ընկերութիւնը, և որի անդամներն են Խոջամիրեան եղբարքը, Մելիք Ազարեան, Մուրթաֆեան և Ռ. տէր Միքայէլեան պարոնները:

Սարի արևմտեան կողմը Մելիք Փարսադանների հողն է, և ունին գործարան Հալիձորի մէջ

քիչութեան՝ փորել են գարտուղի ճանապարհներ մինչև 30—100 սաժէն խորութեամբ, և այդ մութը ճանապարհներում 100 աւոր մշակներ աշխատում են. բայց ճշմարիտն ասած մի շատ դժուարին աշխատանք, կատարեալ յանձաւորի տեղ, և վտանգաւոր, երբեմն եթէ պատահում է մեծ հեղեղներ, որ նոյն բացուած մաղարայի բերնից ջուրը ներս է լեցվում. այն ժամանակ յայտնի բան է ներսի եղող այնքան բազմութիւնը մշակների խեղդամահ են լինում):

Այս քան հարիւրաւոր բացուածքներից յետոյ ինչպէս հաւատացնում են նոյն գործող անձնաւորութիւնք, դեռ շատ տեղեր մնացել են ֆամ իրենց հարստութեամբ շատ տարիներու կարոտութիւն ունին բանեցնելու, բացի այս հողերից՝ առանձին հողեր ունին նոյն պատմական մելիք Փարսադանների ցեղը, որ իրենց հողում գտնուած հանքի մի մասը տուած են կապալաւ մի Յոյնի, և շատ տեղեր էլ դեռ մնացած է անգործածելի կարելի է տալ կապալաւ այլոց ի գործադրութիւն և կամ բանեցնել ինքեանք—եթէ շնորք ունեն, որովհետև մեծ հմտութիւն և տոկոնութիւն է հարկաւոր հանքը գործածել և օգտուել, որ՝ ամեն մարդու շնորք չէ:

Այս տեղ մեր զետեղած նկարը ինչպէս կերևի № 336 նկարից Հալեձորում նոյն վերոյիշեալ սարի ստորոտում գտնուած Հուղուր գետի ափին կառուցած գաղարի ընկերութեան գործարանն է, որի անդամները ինչպէս յիշեցինք հայեր են, Խոջամիրեան, մելիք Ազարեան, Մութաֆեան և տէր Միքայէլեան պարոնները, որոց ամենահարուստը այս է անուանուում:

Ունի այս տեղ կառավարութիւնն էլ մի մաս հող, բայց մեծ մասը Հալեձորում՝ սկսած Բէէ գիւղից և հանքերից մինչև պատմական Դաւիթ բէգի բերդի սարը և սորա հարաւային կողմի անտառոտ սարովը, համարեայ մեծ մասամբ պատկանում է մելիք Փարսադանների ցեղին:

Բէկ գիւղը, որոյ հին անունն էլ այսպէս է կոչվում (և էր սա երբեմն Տաթևի սեպհականութիւն, որ և յետոյ փոխարինվում է Աբատ շէնի հետ). գտնվում է ձորի հարաւ արևմտեան կողմը բարձր սարաբլուրների վերայ, 30 տուն հայ բնակիչներով

որոց 20ը համարեայ մէլիք Փարսադանների ցեղից են կազմում և բէկեր են կոչվում. սոցա կալուածքն է այս և վերոյիշեալ հողերն էլ. բնակիչների պարապմունքն է մի միայն հողագործութիւն, այն էլ հին նահապետական դրութեամբ, և մասամբ աշխատում են պղնձահանքերում:

Ունին հին ժամանակից մնացած մի անշուք շատ փոքրիկ մատուռ մի քահանայով, աւանդութեամբ ասում են, որ այս շինել է Շահանդուխտ թագուհին, բայց չունի մի որ և է արձանագրութիւն, միայն արևմտեան դռան վերայ նշմարվում է արձանագրութեան հետքեր, բայց այնքան մաշուած, որ անկարելի է մի բառ անգամ դուրս բերել: Մատուռիս շուրջը գերեմանատուն է, մաշուած և հնացած տապանաքարերով, որոց միջին կան երկու տապանաքարեր որ կարելի է լինում կարդացուելու. վերոյիշեալ տապանաքարերի վերայի արձանագրութիւնները, որը պատկանում է մէլիք Փարսադանների որդիներին գրուած է այս պէս (այս է տապան Մէլիք Փարսադանի որդի Տէր Սարգիսին թուականին ՌՄԺԺԵ.) սորա կողքին է և միւս տապանաքարը այս օրինակ արձանագրութեամբ (այս է տապան Մէլիք Փարսադանի որդի Մէլիք Բալօին զօրապետին նորոգեցաւ ի ժառանգութիւն Սիմէօն բէգին թվ. ՌՄԽ.)

Գիւղիս հարաւային կողմում երեք վերստ ճանապարհաւ՝ բարձրում սարի վերայ մէլիք Փարսադանների կալուածքի մէջ կայ փոքրիկ անշուք մի մատուռ, որ անուանում են Գանձաբարախ և է ուխտատեղի սրբոյն Աբրիստակէսի անուան, սրոյ ուխտադրութեան օրը համբարձման տօնին է լինում, ուր մեծ բազմութիւն ուխտաւորների գալիս են մերձակայ գիւղերից: Սորա դէմը պղնձահանքի լեռան բարձրում Ղաղար գիւղն է. որ Թուրքեր են բնակվում 30 տուն. այս տեղ էլ կայ մի հնադարեան եկեղեցի օրօրոցաձև, հասարակ քարերից շինած և ծառայում է այժմ Թուքերի յարդանոց, ափսոս որ սորա վերայ էլ արձանագրութիւն չէ երևում:

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ: ✻ ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԳԱՒԻԹ ԲԷԳԻ ԲԵՐԴԸ № 337

Գաւիթ բէգի բերդը ընկնում է Ռեխ գիւղի արևմտեան կողմը. Հալիձորում Հուղուր անուանեալ գետի եզերքից սկսած մի բարձր սարակատարի վերայ. սարը պատած է այժմ մասամբ Ղաբաղաճի, Ընկուզի, և Հացի ծառերով, այս տեղերքում անցնելիս և մինչև սարը բարձրանալիս դուք տեսնում էք շինուածոց յետքերը, անշուշտ յիշում էք, որ մի ժամանակ բնակութիւն է եղած. իւր փոքրիկ եկեղեցին դեռ մինչև այժմ մնացած է, ի հարկէ խարխուլ դրութեամբ, որը գտնվում է բերդի պարսպից դուրս շինամէջին:

Ռերդը չորս կողմից պարսպապատած է, հարաւային և հիւսիսային կողմերից մի մի դուռ ունի. պարսպի մէջ մտնելիս աչքի է ընկնում զանազան մեծութեան բաղմաթիւ սենեակների փլատակները, որոնց շատերը մնացած են ողջ և են կամարակապ. այժմ դորանց ամենքը հողի տակ ծածկուած են՝ մասամբ իրենց կամարներն են երևում:

Սա այժմ նոյն պատմական Մելիք Փարսադանների կալուածքն է համարվում:

Որովհետև տեղը զառիվայր լինելուն, բերդն էլ նոյն ուղղութեամբ զառիվայր պարսպով շինած է հարաւ արևմտեան անկիւնում, ունի մի բուրգ վերին մասը բոլորովին կործանուած, պարսպի մէջ արևելեան կողմը մի փոքրիկ եկեղեցի կայ՝ փոքրիկ կաթուղիկէով, բայց թէ կաթուղիկէն և թէ եկեղեցին կիսաքանդ է: Եկեղեցւոյ մէջ առանձին մի փոքրիկ գաւիթ կայ փոքրիկ կամարով և երկու՝ նոյնպէս փոքրիկ սիւներով, գաւթի մէջ երկու կողմի վերայ շարուած են տապանաքարեր, որոնցից մի քանիսը կարդացվում են, իսկ միւսները ամենևին ոչ. գաւթից ներս մտնելիս ձախ կողմում պատի տակ կայ մի տապանաքար, որի վերայ քանդակ էլ կայ, հաւանականաբար մի խոյի գլուխի է նման և կլորակ վահանաձև քանդակ, վերև գրած է՝ Հշոպ: բայց միւս տողերը չեն կարդացվում քարը կոտրուած լինելով: Ասում են, որ այն է եղել պատմական քաջ Գաւիթ Ռէկի գերեզմանը. այս տեղից երբեմն փորելիս իրեղէններ ևս գտնում, ինչպէս մեզ էլ յաջողուեց գտնել մի նիզակի ծայր, կանաչագոյն և պղնձեայ, վերան մի քանի տեղեր փորուածք՝ զարդեր միայն կան:

Այս բերդը, ինչպէս տեղւոյն ծերունիները ասում են աւանդութեամբ լսած լինելով թէ՝ վերջի պատմական Դաւիթ Ռէկի ժամանակից էլ առաջ կայ եղել այս տեղ. բայց ի՞նչ անունով էր յիշվում այդ՝ չգիտենք. Ղամչեանը սորա մասին միայն յիշում է՝ ամրոցն Հալիձորոյ. Բայց Դաւիթ ինչպէս երևում է 1726 թուականին 70000 այլազգի հրոսակների դէմ մարտնչելու ժամանակ նորոգում է այս, և իւր սակաւաթիւ բայց քաջամարտիկ զօրքերով ապաստանում է այս տեղ, որը ինչպէս յայտնի է Մէլիք Փարսադան, Տէր Աւետիք և Մխիթար քաջ զօրավարների յանդուգն քաջագործութեամբ ազատում են ամրոցը 6 օրեայ պաշարումից, որը այլազգիները արել էին, այդ տեղ այլազգիները տեսնելով, որ անհնար է լինում Դաւիթին և ամրոցին յաղթել այդպիսի պաշարումից, 8 րդ օրը չարախորհուրդ մեքենաներ են հնարում և կանգնեցնում են ամրոցի պարիսպներու երեք կողմերը, և կամենում են ներս խուժել. ամրոցում եղած ժողովուրդը, հոգևորականները, և զօրքերը թէև յուսահատվում են, բայց Դաւիթ սուրը ձեռին՝ պարըսպի վերայ բարձրացող թշնամիներին կոտորելով վայր է ձգում այնպէս որ՝ ինչպէս գրում է՝

«Այլ զօրք Դաւթի սրով հարեալ ընոսա և զբազումս միջակտուր արարեալ ի վայր թօթափէին. և այնչափ եղեն թօթափեալ դիակունքն, մինչև բլուրս գործել առաջի ամրոցին»...:

Որովհետև ամրոցում ինչպէս տեսանք զօրքը սակաւաթիւ էր, և անկարելի էր լինում այնքան բազմաթիւ թշնամիներին յաղթել բերդիցը՝ միայն այդ կերպով. ուստի Աւետիք և Մխիթար զօրավարները 300 զօրքով բերդի գաղտնի մի ճանապարհով յանկարծակի թշնամու առաջի խմբի վերայ յարձակում գործելով կոտորում են՝ այս պէս երրորդ և չորրորդ խումբերուն, որով թշնամիք զարհուրած ջարդվում և 13000 մեռեալներ թողնելով 148 դրօշակներ կորցնելով, բացի զանազան իրեղէնների և պաշարների, փախչում են. ինչպէս ասում է Հ. Ղամչեան «Դիմեցին զկնի նոցա զօրքն Դաւթի և հարին զբազումս, ընդ ամենայն երեքտասան այր, և առին հարիւր քառասուն և ութն դրօշակս, և զայլ ամենայն ագիս նոցա և դարձան ի Հալիձոր:» այդ ժամանակից մինչի օրս սոյն ամրոցը Դաւիթ Ռէկ անունով են կոչում:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Ինչպէս յիշել էինք մեր Ա. գրքում, որ մեծն Հայաստանում մեր ճանապարհորդութեան միջոցին տեսել ենք հնութիւններ, որոնք գտնուել են, հին աւերակ վանքերից, գերեզմանատներից, աւեր գիւղատեղերից և այլն կասկածելի տեղերից, որոնք գտնում են գիւղացիք շատ ժամանակ հողը մշակելիս, և կամ մասնաւոր անձինք ձեռք են բերում, յատուկ փորել տալով յուսալի տեղերից:

Գտնուած հնութիւնները լինում են հին դարերի զանազան ազգաց և հայ թագաւորների փողեր, ոսկի, արծաթ և պղինձ տեսակներից. նաև իրեղէններ հին հեթանոսական, կռապաշտական, նոյնպէս և Հայոց, որոնք առհասարակ մեծ մասամբ անհասկացող և սորա արժէքը չգիտացող խեղճ ոգէտ գիւղացւոց ձեռն անցնում որ ի հարկէ փըչացնում են. իսկ գնահատողների կողմից, անշուշտ այդպիսիք վարձադրութեամբ ձեռք են բերվում և պահպանվում, թէ սիրողների և թէ հարուստ թանգարանների նպատակը և դարդը ճոխացնելու:

Մեր նկարածներից առանձին, նաև բաղդ ունեցանք անցեալ տարիներ տեսնել հին Նախիջևանի փոխանորդ Սամաղարցի Երց. Գրիգորիս վարդապետ տէր Յակոբեանի մօտ բաւականին հարուստ և հետաքրքիր հնութեան ժողովածու, որոնցից մի մաս նկարելով զետեղում ենք այս գրքում տես № 351 նկարը:

Յիշեալ նկարը զանազան իրեր և քարացած մարմիններ են իւրաքանչիւր իրեղէնի առաջ մենք, ինչպէս երևում է թուանշաններ ենք դրած, աւելորդ չլինիր եթէ նորանք այստեղ բացադրենք իրր ծանօթութիւն իրենց թուահամարներով:

№ 1-ը Նուռի կամ Աբելսենի ճիշտ նմանութիւն ունի. և է քարացած շատ դարերի ընթացքում, սա գտնուած է Խ-ԷԿ գիւղի սարերից, որը գտնվում է Վայոց ձորի և Երասխի մէջ եղած լեռնաշղթայում:

№ 2. Քարեայ կաթնաման և № 18. թէյաման նոյնպէս քարեայ սիրուն քանդակներով զարդարած, բոլորովին ողջ: Գտնվել է հին Նախիջևանում Նոյեան տապան ասուած մի կլորակ աշտարակի կողքից, թուրքերը աղիս շինելու համար հողը փորելու ժամանակներին, որ և յիշեալ հայր-

տուրքը բաւականացնում է նոցա, այդ իրերը ձեռք բերելու համար բաւականաչափ դին վճարելով։

№ 3. Քարացած մեծ օձի մարմնից մի մաս, Աստապատի կարմիր վանքի ժայռերից գտնուած։

» 4. Փոքրիկ մի աման պղնձեայ, վրան կոնաչ գոյն ստացած, ներքևը բոլորովին փչացած. Այսոց ձորում Էրեբունի գիւղից գտնումեն գիւղացի մշակները, հողը յերկելիս։

» 5. Կատարեալ և իսկական մոմ է մինչև 3 ½ վերշոքի լայնութեամբ, բայց առանց պատրոյկի է. Այսոց ձորում Հոռոմ գիւղի մօտ հռչակաւոր Շաղինու վանքի հարաւային թումբի մէջից գտնուած։

» 6. Նման է իսկ և իսկ գորտի, նոյնպէս քարացած. Ջուղայի սարերից է։

» 7. Մի պղնձեայ մեծադիր փող, վրան թագաւորական կիսանկարով, բայց գրեր չեն երևում և չէ յայտ որտեղից գտնուիլը, մասնաւոր անձանցմէ գնուած լինելուն համար։

» 8. Մի արծաթեայ փող, ռուսաց 25 կոպեկանոց արծաթ փողի մեծութեամբ, բայց սա միայն բարակ է. ունի վերան կլորակ մեծ շրջանակ, որի մէջ կանգնած են երկու անձինք, սոցա մէջ տեղը կրակ է վառվում, հաւանականաբար Ատրուշանի փողը լինել կ'կարծուի, իսկ միւս երեսը՝ Շապուհի խճուճ մօրուքաւոր գլուխը. ձեռք է բերուած մի թումբից։

» 9. Փոքրիկ արծաթեայ փող է, մի կողմը թագաւորական զգեստով մի անձ, շուրջը գրեր կան Յունարէն, թերևս Յ-ԷՈՍ Ա-Գ ՈՍ գրած. միւս կողմը երկու մարդիկ կանգնած ձեռքերնին հաշտութեան նշան բարձրացրած։

» 10. Մի կոպիտ, հաստ ու փոքրիկ արծաթեայ փող, որի մի կողմը նստած է թագուհին, և միւս կողմը մի մարդ, որ է թագաւոր. մի ձեռքին բրոնած ունի դահիսն և միւս ձեռքին բաղէ, ինչպէս երևում է Աղէքսանդր Մակեդոնացին է։

» 11. Ոսկեայ փող—20 կոպեկանոց արծաթի մեծութեամբ. Աղենախանոսի փողն է համարվում. բայց չէ իմացվում որտեղից գտնուիլը։

» 12. Հաւկթաձև բրօնզեայ մի իր, որն որ շատ հաւանական է լինել պատուանշանի քան թէ փողի. ունի վերին մասում օղակ կախ տալու համար, որի

մի երեսը պապի նկարն է, գուցէ Պենեկտիկտոս, կողքում մի թագ և մեռոնի ման, տակը գրած Լատիներէն Հռոմ. միւս երեսը Ատուածածնայ պատկերը՝ գրկումը Քրիստոս, իսկ ոտների տակ աւերակներ:

» 13. Պղնձեայ փոքրիկ զանգակ վերան քանդակներով. Վայոց ձորում Տալեանք թրքաբնակ գիւղից գտնուած:

» 14—17. Մեծ և փոքր կլորացած օձեր նոյնպէս քարացած և առանց գլխի. գտնուած է Ատապատում կարմիր վանքի մօտերից:

» 15. Կարծվում է դրօշակի վերին մաս լինել, որը երկաթից է և չորս հինգ դուրս ցցուած շառաւիղներ ունի. սորա ներքին մասումը գրուած է Արաբերէն, որը թարգմանում են այսպէս (ոտէր որ կատարող էք բոլոր ցանկութեանց)

» 16. Քարացած ոստրէ, հին Ջուղայի սարից գտնուած:

Կան նաև հաւաքած շատ հնութիւններ վերոյիշեալ հայրասուրբի մօտ, ինչպէս են բոլորովին քարացած գնդակներ, նիզակի ծայրեր՝ պղնձից և երկաթից. 28 կտոր արծաթ զանազան փողեր, երեք կտոր ոսկեայ և 70 կտոր պղնձեայ, զանազան մեծութեամբ. քարեայ խաչ գոյն զգոյն կտորներով, ափսէ, քարացած բոյսեր և այլն. շատ հետաքրքիր իրեղէններ:

Ինչպէս երևում է միշտ վերցնում է և հաւաքում սոյն տեսակ հնութիւնները, բայց ի՞նչ նպակաւ, հաստատ մի բան չկարողացանք իմանալ. երևի մի հետաքրքիր հնաւէրի ծախելու և կամ ազգային թանգարանի մէջ իւր յիշատակը թողնելու մտօք լինի:

ԷՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Հ.Ս.Խ.Հ. Հանրային գրադարան
U.S.S.R. Public Library
7/XI—1922
անվան Ա. Մասիսյանի
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՋՐՎԷԺ ՍԻՆԻՔՈՒՄ № 339

Եպէտև Սինեաց աշխարհը ինչպէս յայտնի եղաւ շատ հարուստ՝ անտառոտ և գեղեցիկ երկիր է. բայց տեղացիք ինչպէս երևում է չեն կարողանում օգտուել բնութեան պարգևած այս մեծ բարիքներից, գեղեցիկ է՝ իւր բարձրաբերձ լեռներով, ահռելի անդնդախոր ձորերով, բնութեան հրաշալիքներով, ամեն քայլափոխում երևեցած մի մի նոր հիացքանչ տեսարաններով լայն: Հարուստ է իւր ահագին անտառներով, իւր մէջ ունեցած հարուստ հանքերով, հանքային ջրերով, քաղցրահամ և սառնորակ աղբիւրներով, կարկաչուն առուակներով, ջրվէժներով:

Հռչակաւոր է նաև իւր պատմական տեղերով, որոնք տխուր յիշատակներ մարդուս միտքն ու ըզգացմունքներն են զարթեցնում: Երբ Դաւիթ Բէկի բերդից մեր ճանապարհը շարունակում ենք և մըտնում Ղ.բանի ձորը, որի մէջ գտնուում է և տեսանելի ուղեւորի աչաց, տեղ տեղ սարերի կատարներում բերդերի, ամրութիւնների, փլատակների, որոնք անցեալի տխուր յիշատակներն են թողած. միայն սոցա առաջ անդնդախոր ձորերի մէջ գըտնուած ահռելի գետերի՝ ականջ խլացուցիչ ձայներն էք լսում, և սոքա այնքան ձեզ հեռաքրքրում են որ ստիպվում էք մեծ նեղութիւններ կրելով և վըտանգն աչք առնելով իջնել քարաժայռերից ցածը մինչև ջրի մակերևոյթը, որ սարսափեցնում է ձեզ ձեր առաջ սպառնալից աչքերով վայր թափուող՝ փրփուր կտրած ջուրը, որը ջրվէժ է. և այնքան ահեղ զօրութեամբ թափուելիս գոյացրել է ցածրում ահագին և մեծ, ընդարձակ մի աւազան:

Մի միայն մի քանի սաժէն մեծութեամբ գտնուած ժայռերն են, որ երբեմն տեղեր ցից ցից կանգնած երևում են ջրի մէջ. կարծէք ուզում են դիմադրել և ճանապարհը փակել. բայց անոյժ գտնուելով ջրի անդիմադրելի զօրութեան դէմ՝ փշրուել են, որով կարողանում է գետը իւր ճանապարհը շարունակել:

Այս տեղ ջրի ցածրում դուք կանգնելիս մի սարսուռ էք զգում, և սարսափում. ձեր երկու կողմերնիդ բարձր ցցուած քարաժայռերը, առաջնիդ բարձրից թափուող փոշեացած սպիտակ ջուրը, որ կարծէք ձեզ կլանելու համար է՝ ահռելի ձայներով դալիս թափվում: Մենք նկարում ենք այդ ջրվէժը և գետեղում սոյն գրքիս մէջ, նոյնպէս ի տես հայրենասէրների տես № 339 նկարը, որը գտնուում է կողմանց բերդի տակ, և վերջ կոտանք Սինեքում գըտնուած գլխաւոր՝ այսքան նկարներով:

Այս գնելով մեր հայրենասէր անձանց աջակցութեան դէպի մեր սկսած ծանր գործին, որ կարող լինինք մնացեալներն էլ հանդէս բ'երելու, տեսնելի հարուստ և ճոխ կերպիւ:

2008
2018
2017

ՀՀ Ազգային գրադարան
NL0500182